№ 9 (161)   XV ՏԱՐԻ   ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԽՈՆԱՐՀԻՈՂ ԹԱԳԸ

1903 թւին հայոց եկեղեցու պետին ուղղած սպառնական հեռագրի մէջ՝ ամենակարողն Պլեվէ այսպէս ազդարարեց՝

„Նորին Մեծութեան վճիռ հայ եկեղեցական կալուածքների կառավարութեան գործում՝ անդարձ է և Ձեր ամենահպատակ խնդիրքը փոխելու յիշեալ օրէնքը, Նորին Մեծութեան կողմից թողնւում է անհետևանք":

Եւ լքումը նորից տիրեց հայոց կաթողիկոսարանի մէջ, կրօնական կենտրոնի մռայլ խուցերում և այն բոլոր գանգերի մէջ, ուր մի քաղաքականութիւն միայն կայ — աղերսանքի քաղաքականութիւն, մի միջոց միայն — արկանել առ ոտս գահոյից...

Սակայն այլ էր տրամադրութիւնը շինական տնակներում, աւանների ու քաղաքների մէջ, ուր Հ. Յ. Դաշնակցութիւնը այլ ճանապարհ էր հարթել — ճանապարհ բողոքի ու դիմադրութեան:

Դէպքերը ցոյցերի փոխւեցին: Մասնակի բողոքի ձայները խմբական դիմադրութեան վերածւեցին, և ամբողջ Կովկասը ականատես եղաւ ժողովրդական միաձոյլ ըմբոստացման, որի նմանը դեռ երբեք չէր արձանագրւած մեր „ստրուկ" երկրի տարեգրութեան մէջ, առատ արիւնով և դիակներով, բայց դեռ սկսնակ՝ հերոսներով ու կռւով...

Արդիւնքը:

Մեր առաջն է այն — հակիրճ հեռագրալուրի ձևով, տարածւած բանապետութեան կենտրոնական կայանից, օգոստոսի 14-ի թւով. „Կայսերական ուկազով — ասում է հեռագիրը — հայոց եկեղեցական բոլոր կալուածքներն ու գոյքերը վերստին դրւում են հայոց եկեղեցու վարչութեան ներքոյ" — որ պարզ լեզւով՝ եկեղեցական կալուածքների վերադարձի նշանն է, լուծումը մի խնդրի, որ երկու տարուց ի վեր ջլաձգութեան գիրկն էր նետել մի ամբողջ ժողովուրդ, առանց այն էլ շատ ցաւոտ և վշտաբեկ... Դրա հետ միասին, նոյն կայսերական ուկազով, յայտարարւում է վերաբացումը տաս տարուց ի վեր փակւած հայ դպրոցների:

Միամիտ չը լինենք և ոչ էլ գերի քաղաքական խակութեան: Յայտարարւած „դարձը" հետևանք չէ բանակալութեան բնքշացման և կամ վարչական նոր հովերի, այլ հարազատ ծնունդ այն սպառնալիքի, որ 93-ի դիմադրութեան օրերից սկսած՝ ինչպէս մշտական երկիւղ, թագաւորում է Թիֆլիսի փոխարքայական պալատի և նրա արքանեակների վրայ, նահանգապետական ապարանքներում: Մարտական քաղաքականութեան պտուղն է այդ, գաղափարական ծնունդը այն զոհ-հերոսների, որոնց արիւնով ներկւեցան եկեղեցիների գաւիթները, ցոյցերի անմոռաց օրերին...

Յանդուգն ու „ամենակարող" միապետութիւնը գլուխ խոնարհեցրեց, ոտք կոխեց — առաջին անգամը՝ մեր երկրի պատմութեան մէջ — զիջման շաւղի վրայ, և նոյն գրչով, որով լիազօրութիւն էր տւել հալածամոլ Գօլիցինի անլուր, անզուսպ անարդարութիւններին, առաջադրեց նրա յաջորդին — վերջին պահուն — խաղաղացնել հայկական տրամադրութիւնները, հանգցնել ատելութեան և գրգռման բոցը, որով բռնկւած է ամբողջ հայ ժողովուրդը...

Բայց արդէն ուշ է... Երկար տարիների անլուր բռնութիւններից յետոյ՝ յաջորդական հալածանքների գագաթնակէտին հասած, ցարի կառավարութիւնը չէ կարող այդպիսի զիջումներով սպեղանի պատրաստել խորունկ վէրքերի համար, մոռացնել տալ այն ողբերգական մօմենտները, որոնց յիշատակը անջնջելի է, արձագանքը՝ անմոռանալի:

Չը կայ հաշտութիւն:

Բնական է, որքան գերի և խաղալիք եղանք „սամօդուրների" և „այլասերւածների" ձեռքում: Յեղափոխական մտածողութիւնը և դրա հետ կապւած արիւնոտ կռիւը՝ այլ ևս թոյլ չի տալիս շտատնալ, կամ աւելի ճիշտ ասած՝ խաբւել խոստումների և զիջումների քաղաքականութեամբ: Քսան տարւայ պատմութիւնը դրան նեցուկ: Դոնդուկով-Կորսակովի քաղաքական „աքցիները" մոռացնել տալու համար՝ Կովկասի գլխին կառավարիչ կարգեցին Շերեմետեվ: Բայց ինչ օգուտ: Նըրանից յետոյ եկաւ Գօլիցին, և ամէն ինչ քար ու քանդ եղաւ: Գիւղ չը մնաց առանց արտասուքի, քաղաք՝ առանց վշտի: Գօլիցինեան „դժոխքը" մոռացնել տալու համար՝ ձիթենու ճիւղով Կովկաս ճամբեցին Վօրօնցով-Դաշկով — սակայն թիւրք-հայկական ընդհարումները պատռեցին Պետերբուրգում պատրաստած անթափանցելի դիմակը, և միապետութեան այլանդակութիւնը հանդէս եկաւ իր ամբողջ մեծութեամբ, իր գարշանքի ամբողջ ոյժով..

Փաստերը շատ են պերճախօս և չափազանց ա-

բիւնոտ։ Այդ փաստերի դիմաց՝ եկեղեցական կալուածների վերադարձը և դպրոցների վերաբացումը ժողովրդական ըմբոստութեան յաղթանակն են, բայց ոչ քաղաքական հաշտութեան միջոց։ Զինադադարի ժամը դեռ հեռու է։ Առաջին գիշմանը վաղը կը յաջորդի երկրորդը—ընկերութիւնները կը վերադառնան իրենց նախկին կանոնադրութեան, աքսորուածները հրաւէր կը ստանան իրանց ծննդավայրը տեսնել—մի խօսքով Գալիցին, թէև դեռ կենդանի, կը ընչի կով կասեան պատմութեան էջերից։ Սակայն դա բոլորը չէ։

Մենք չենք ուզում կախուած լինել ոչ միապետի քըմահաճոյքից և ոչ էլ Գալիցիների կամ Վլաոնցով-Դաշկովի տրամադրութիւններից։ Մենք ուզում ենք մեր տէրը լինել։ Մերը պիտի լինի և դպրոցը, և եկեղեցին, և հողը, և իրաւունքը։

„Բարեխնամ“ ցարիզմը մեր երկիրը դարձրեց աւաղականոց. աշխատանքի վայրում արիւն տարածեց. տարագիր դարձրեց նրա լաւագոյն որդոց, ոտի տակ տրորեց մեր ամբողջ միտքը, մի ահագին ժողովուրդ՝ իր պատմութեամբ ու ապագայով. ստրկացրեց նրան հոգեպէս և տնտեսապէս, հասցրեց յուսահատ չքաւորութեան. բռնացաւ հայի ճակատագրի վրայ նոյնիսկ իր պետութեան սահմաններից դուրս։ Հազար ու մի անգամ դրժեց իր արքայական խոստումներն ու պաշտօնական հրովարտակները—կարո՞ղ ենք մենք հաշտութեան ձեռք մեկնել նրան, վայր դնել յեղափոխական մարտի արիւնանոկ զէնքը։ Երբէ՛ք։

Բարձրագիր, ամենակարող համաբաւած թագը, ցնցուած ուժգին հարուածներից, խոնարհւում է ժողովրդեան կամքի առջև։ Դա փաստ է։ Նա որ երբեմն „անմատութիւն“ էր համարում հպատակներին խելը, այժմ ժողովրդեան ներկայացուցչութեան ծրագիրներ է յօրինում և կայսերական ուղղով հալածական ժողովրդին է վերադարձնում մի իրաւունք, որի յափշտակութիւնը երկու տարի առաջ յայտարարուած էր „անդարձ, վերջնական“։

Սակայն թագի խոնարհումը՝ ազատագրական գործի սկիզբն է միայն և ոչ վախճանը։ Խլել այդ „թագը“ միապետի գլխից և դնել Նրան ժողովրդի գլխին, ջնջել բոլոր հարստահարութիւնները, ապահովել աշխատաւոր ու տանջուող ընդհանրութեան բոլոր կոխկռտուած իրաւունքները,—ահա այդ կը լինի կռուի վախճանը, խաղաղութեան միակ պայմանը։ Եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր այս առաջին յաղթութիւնից յետոյ, անշեղ կընթանայ նոյն յեղափոխական կռուի ճանապարհով. ձեռք ձեռքի տուած բոլոր գործօն յեղափոխական կուսակցութիւնների հետ՝ նա կը դիմէ դէպի մեծ ու վերջնական յաղթանակը։

Մի՛ վհատիր...

Մի՛ վհատիր, յոգնած ընկեր, ոտքի ելի,
Առաջ թռի՛ր խիզախ ոգով անարգել.
Թո՛ղ հաւատով լցուի սիրտդ այրական,
Թո՛ղ սթափուին վառ յոյսերդ առնական։

Ինչո՞ւ տրտում հեռու քաշուենք վհատած,
Երբ մենք կեանքի տէրը, իշխան ենք որոշած.
Կեանքը մե՛րն է. մենք ենք փոխում անսպասելի
Առաջ շարժում նրա ընթացքն անսահման։

Մի՛ վհատի՛ր, տե՛ս ի՞նչ յամառ եռանդով
Մարդիկ կեանքում աշխատում են լի յուսով.
Ցոյսը նրանց կեանքի ո՛յժ է պարգևում.
Ցոյսը նրանց առա՞ջ, առա՞ջ է մղում։

Օ՜, մի՛ ընկճուիր, տես թէ ի՞նչպէս ամեն ինչ
Ունի և՛ վիշտ և՛ քաղցրութիւն սփոփիչ.
Ցաւն ու վիշտը սուր փշեր են մեր կեանքում.
Առանց փշի վարդ չես գտնիլ աշխարհում։

ԺԻՐԱՅՐ

ԽԱԲՐԲԵՐ ԿՌՈՒՆԿ

Մարտի քսանին նէքերս սլանա՜ կ,
Ձմեռանի բակից երկինք աչքերով.
Ասի բալբի մի խաբրիկ մը առնիմ.
Կարմկներ կընցնին սօրանց ընաքով

Եարա՜պ, Տէ՛ր Աստուած. ի՞նչ հղան ամնա՛պ,
Ի՞նչի կընընկներ էս տարի չեկան,
Դիշերո՞վ զացին, յօր ես չը տեսնի՞մ,
Թէ՞ ուրիշ ճամբով թողին ու յնցան. . .

Ջա՛ն, ձէնիդ կուռպան, տեսայ քո ջարան,
Ջ'Ատուած կը սիրիս, դու զուտանց չերթաս,
Էս մեր վէրևից յնցոր քո քարվան.
Քի խարցմունք մ'ունիմ, ձայ ջուռնալ մի տաս։

Դու բարով եկար, ո՞ր տեղ մնացիր,
Ասա՛ ծիկ, կռունկ, ի՞նչի յանգրցար.
Ջուռալ մի տոր ձայ, ա՜խ սիրտսի պատռաւ,
Դէհ, ասա՛ կռունկ, ամնալ ի՞նչ տեսար,

Դուն կը բանձրանաս, ու կը ցածրանաս,
Հարաֆից կուգաս, կերթաս ի հիսխ,
Տարին երկու դեր քո բուն կը դնես,
Եպատ, Անղօք, Սիս, Սիվան ու Մասխ։

Ձիկ ընկերներ կան էն սարանց վէրէն,
Անցալ ի՞նչ կէնին, խապրիկ մի չունի՞ս,
Տեսա՞ր տոռ զէնոնք, լսի՞ր զէնոնց ձէն,
Ջուռալ մի տուր ձայ. դուրսան քի խոզիս։

Ի՞նչ ումուտներով ճամբան յէլոյ իս,
Ի՞նչ կէր սրտիս մէջ, ու ի՞նչ էր դարձուս։
Ցոկիրնեիս յըմէն չորս տեղ կը կռո՞ւին
Եռ մացի զնտան, էս ա իմ դատ ցաւ.

Ընկերներսի կիս. ճամբան դրեցին
Թէսլիմ էրէցին տէրով ամանաթ
Դրիուանք մէկ մէկ պաքեցինք զիրար,
Ուրախ իմ յըմէն սուլ ու սալամաթ,

Մկայ չը՞մ գիտեր, ո՞ւր են թէ՞ մեռան,
Խապար մի չառայ, վիրմի՞ց խարցուցիմ
Ոտս ձիոս սալեր ին, թալիր իմ զնտան,
Կռունկ քեզնից զատ խաբրեր չունիմ։

Դէ՜ն ասա՛ կռունկ, տո՛ւր լուր աւետիս,
Հրայրն ու Վահան անապ ի՞նչ եղան,
Ի՞նչ եղաւ Թորգոմ, էն Նէվրուզ, Որսորդ
Դրախտին, Աղբէր, Երկաթ, Թախմախ, Խան,

Ա՜խ, իմալ ասեմ, Ջիկարս կոտրաւ
Ասա՛ ի՞նչ եղաւ Ջէնէլ Մինակոր,
Կռո՜ւնկ, ջուա՛պ տուր, լեզուդ պապանձաւ.
Ցո՞ւրա իմ դալդոտ Ազիզ Քրիստափոր
Էլ ո՞ր մէկն ասիմ, ա՜խ, քակուաւ խոզիս,

Մամուռ մտաւ սիրտս, թուլցաւ իմ ոտնիր,
Կռո՛ւնկ, ջուա՛պ տուր, ասա՛, ի՞նչ եղան,
Իմ խաբըրներով կտրիճ ընկերներ...
. . . .

Կռունկ. ձէն զէտուր, զուր քարվան քաշեց
Թռաւ, ղատըրնցու, աչքէս կորուսաւ
Կտրեց զիմ ումուտ, իմ բաժին թողեց
Մութ զնդան, զնջիլ, սև սուգ դարդ ու ցաւ։

Զ. Փ.

ԱՊԻԿԱՐՆԵՐ

Կովկասեան մեր թղթակիցները յաճախ իրաւացի զայրոյթով արձանագրում են մի եղկելի փաստ, որը մեր ներքին հիւանդոտ դրութեան, մեր մտաւոր ու բարոյական ապիկարութեան նշաններից մինն է։ Կան ագիտատօրներ, հայ անուն կրող և գիտական վարդապետութիւնների անունից ճառող, որոնք նորընծաներին յատուկ դօքտրինեօրական նախանձախնդրութեամբ՝ ձգտում են հայ կեանքի բոլոր երևոյթները վերածել իրենց սերտած ու դաւանած ֆօրմուլներին։

Թիւրք-հայկական ընդհարումների պատճառները նըրանց „համոզմունքով“ հայի և թիւրքի տնտեսական անհաւասարութեան մէջ են, հայ տարրի ճնշումների մէջ, նրա նացիօնալիստական հակումների մէջ, և—օ՜ սանձարձակ յիմարութիւն—հայ յեղափոխական կազմակերպութեան ազգային ոգով պրօպագանդի մէջ։

Եւ այդ անզուսպ նէօֆիտները, գիտութեան ու անաչառութեան ծիրանի հագած, պանիսլամիստին արժանի եռանդով, առանց խղճահարուելու, քարոզում են հայ շրջաններում իրենց այլանդակ պարադօքսները, որոնք ի վերջոյ յանգում են այն եզրակացութեան՝ որ հայն ու թիւրքը հաւասարապէս յանցաւոր են յայտնուած ցարիզմի և իսլամական վիժմունքների յարուցած Եղեռնի մէջ...

Երբ այդպիսի յայտարարութիւններ անում են բարոյապէս խպառ ապականուած, քծնելու և շոյելու արհեստի մէջ վարժուած հայ „ինտելիգենտ“-ֆիլիստէրները,—դա մեզ չէ զարմացնում և չէ վրդովում. Հասարակութիւնը ճանաչում է նրանց և գիտէ ըստ արժանւոյն գնահատել նրանց աղտեղութիւնները։ Բայց երբ այդ տեսակ այլանդակ մտքերի քարոզող են յայտնւում գաղափարական կուսակցութիւնների ներկայացուցիչները.—Մենք պէտք է բոլոր ուժով պայքարենք նրանց դէմ և ազդարարենք հայ ժողովրդին, որ նրանք կեղծում են ճշմարտութիւնը, խեղաթիւրում են իրողութիւնները, վիրաւորում են առանց այն էլ վիրաւոր սրտերը.—գիտութեան ու անաչառութեան այդ մեծախօս ասպետները մոռանում են, որ իրենց ընթացքով, տնտեսական թէօրիաներ անտեղի ու անհեթեթ կիրառումներով, անգիտակցաբար վարագուրում են ոճիրը, արդարացնում ու խրախուսում են թիւրքական Կրուշեվաններին և ցարի հայատեաց ծառաներին, որոնք հէնց սկզբից, աղէտների առաջին օրերից՝ ծանուցանում էին ի լուր աշխարհի, թէ սուտ է, որ թիւրք տարրը լարուել է իշխանութեան կողմից հայերի դէմ, սուտ է, որ մահմէդական խուժանը առաջինն է սկսել զինուած յարձակումներն ու լանկթամուրական գազանութիւնները,—այլ թէ կան տնտեսական խորունկ պատճառներ, որոնք բորբոքել են թիւրքի դժգոհութիւնն ու ատելութիւնը հայ ազգաբնակութեան դէմ, և թէ այդ վերջինը, առնւազը, նոյնքան յանցաւոր է, որքան իր կոշտ ու վայրագ դրացին...

Ահա զզւելի, ցաւագին իրողութիւն։ Մեր այդ մանկամիտ „առաքեալները,“ յանուն ինչ որ մետաֆիզիկական արդարութեան ու անաչառութեան, յաճախ օրիգինալ երևալու համար, աւելի յաճախ՝ „Դաշնակցութեան“ գործունէութեանը խանգարելու տենչով՝ պատրաստ են աչք գոցել մահմէդական ամբոխի հանրածանօթ առանձնայատկութիւնների առջև, պատրաստ են անգիտնալ նրա մարդասպան ու կուլտուրասպան հակումները, որոնք այնքան աւերիչ կերպով անդրադարձել են մանաւանդ հայութեան ճակատագրի վրայ, լինի Կովկասում, թէ Տաճկաստանում.—այո՛ „տնտեսական լուսաբանութեան“ այդ անշնորհք փաստաբանները պատրաստ են միևնոյն տընտեսական անհաւասարութեամբ բացատրել Տաճկահայաստանի ամէնօրեայ նահատակութիւնը, քրդի ու տաճկի աշխարհասասան վայրագութիւնները և այլն և այլն... Լեզւին սանձ չը կայ. նա ոլորտւում է հազար ու մի ձևով, անուս ու թերուս „քարոզչի“ բերանում և տգէտ ու հանդուրժող ունկնդիրների առջև թափւում են տխմարութեան մարգարիտները։

Եւ—ցաւօք սրտի պէտք է արձանագրել—հայ յեղափոխական գործիչը հարկադրուած է այսօր իր դժոխային միջավայրում կռիւ մղել ոչ միայն ցարիզմի ու վայրենի խուժանների դէմ, այլ և հարազատ հայրենակիցների դէմ, որոնք սխալ ու անհեթեթ լուսաբանութիւն են տալիս արիւնոտ փաստերին, ձգտում են ջլատել ժողովրդական ինքնապաշտպանութեան անհրաժեշտ գործն ու նրա ղեկավար՝ յեղափոխական կազմակերպութիւնը և այդպիսով անգիտակցաբար սատար են լինում խաւար ուժերին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, յուլիս 22.

Տեղական ժողովրդի մտածութեան և մտատանջութեան առարկան սովն է. Նոր չէ որ սկսւում է նա։ Դեռ անցեալ աշնանից զգալի էր բերքի պակասութիւնը.

կամաց-կամաց ձմրան մոտենալով, սկսում է նկատել հացահատիկների պակասութիւնը և արժէքի բարձրանալը, թէև սկզբում թեթև կերպով—բայց քանի գընում աւելանում է և վերջապէս ձմրան ամիսներին լուրջ բնաւորութիւն է ստանում սովը։ Քաղաքում հացթուխները սկսում են դադարեցնել կանոնաւոր և պարբերաբար հաց վաճառելը, և այդպէս արհեստական կերպով հացի գինը բարձրանում է։ Կառավարութիւնը, գիտակ այդ բանին, ոչ միայն որևէ միջոց ձեռք չէ առնում սահմանափակելու, այլ ընդհակառակը, աւելի դիւրութիւններ է տալիս այդ արհեստականութեան. չէ՞ որ նրա նպատակներից մէկն էլ՝ ազգաբնակութիւնը տնտեսապէս քայքայելն է... Դա ձեռնարկում է հարկահանութեան, բայց խօսքս „օրինաւոր“ ճանաչուած հարկերի մասին չէ, որոնք ամեն տարի պարբերաբար հաւաքւում են, ոչ—այլ բաղքիայի (յաւելեալ տուրքեր), որը չափ ու սահման չունի, ոչ էլ սկիզբ ու վերջ։ Եւ ի՞նչ գժոխային չարչարանքներով... Բայց ի՞նչ ասել այդ չարչարանքների մասին, չէ՞ որ հազարաւոր անգամներ ասուած, գրուած է, և մի առանձին նորութիւն չենք ասի. Այնքան անգամներ լսել ու կարդացել են գրսեցիները Ցաճկահայաստանում տեղի ունեցող չարչարանքների ու բարբարոսութիւնների մասին, որ սովորական համարելուց բացի՝ իրանք էլ յոգնել են, և ներկայումս թեթևս նման ընթերցումները միմիայն ջղեր գրգռեն։ Ի՞նչ անենք, որքան էլ հանրածանօթ լինի, մենք լռութեան չենք կարող տալ, այդ տեսարանները մեր աչքի առաջ է կատարւում, շարունակ ականատես և ականջալուր ենք մրմնջացող ցաւերի ու թշուառութեան, մենք չենք կարող բռնաբարել մեր զգացողութիւնը և չ'արտայայտել մեզ պատկերացրած չարչարանքների սոսկումը։

Մարդկանց գլխի վայր կախելը ախոռի մէջ, բերանները անասունների աղբ լցնելը, անգթօրէն գանակոծելը, բերանները բաց անել և մէջը թքելը, և այլն, հանրածանօթ են անշուշտ. բայց հանրածանօթ լինելով՝ մոռնում են իրեւ տանջանք, և երբէք էլ այդ գժոխային չարչարանքների, ցաւերի ու կսկիծների ասոիճանը չէ պակասում մարդուս... Դեռ մի կողմը թողած հազարաւոր լկտի արարքներն ու հայհոյանքների տարափը, որ թափում են „գեաւուրի“ հաւատալիքների, կրօնի, խաչի, եկեղեցոյ, մի խօսքով բոլոր նուիրական սրբութիւնների հասցէին, անմասն չեն մնում և ընտանեկան սրբութիւնները, ընտանեկան պատիւը։ Այդ ահի և երկիւղի տակ հայ գիւղացին բնականաբար ունեցած չունեցածը կիսագին ծախում է և մի կերպ գոհացում տալիս ու հեռացնում բայց գոհացումը ոչ թէ յաւելեալ տուրքի վճարմամբ է, այլ եկող թափլտասչիների (հարկահաւաքների) ընդունելը մի բան ձգելովը—կաշառելովը—որ պէս զի բաղքեան յետաձգի յաջորդ տարուան։ Եւ ահա այս դէպքումն էլ այդ հարկահաններն են մրցման մէջ մտնում իրանց գազանութիւններով՝ թէ որը աւելի իւղոտ պատառ կըշահի։ Քմահաճոյքների այս վայրերում հասարակական շահերի, ընդհանրութեան օգտի մասին խօսել ու մտածելը անհատական արարքների պատասխանատուութեան ենթարկուելու տեսակէտից (կառավարական շրջաններումն անգամ) հակաբնական երևոյթ է. այսպէս է այս երկրի ճակատագիրը, այսպէս արդարութեան ու բարոյականութեան հասկացողութիւնը։

Սանձարձակ են թասելտասչիները. իրեւ կառավարական պաշտօնեաներ, ամեն իրաւունքներ բանեցնելէ զատ՝ ամենաճարպիկ խաղեր խաղացող են՝ թէ կառավարութեան և թէ ժողովրդեան գլխին. որևէ գիւղ եթէ իրենց պահանջներին գոհացում չուտեց, իրենց նշանակած կաշառքի, քառափուլի քանակութիւնը մերժեց—պատրաստ են՝ ի վրէժխնդրութիւն, կառավարութեանը ներկայացնել գիւղը իբրև յեղափոխական և ահա գիւղացոց ընկճեցնում են... չէ՞ որ ոստիկաններ պէտք է գան, ուտեն, խմեն, աւրեն, խուզարկեն և վերջն էլ մի գոհացում—քառափուլ—ստանան, որ հեռանան։ Այս բոլորը գիւղացիք լաւ են ուսումնասիրել և գիտեն թէ ինչու ընտրում են երկու չարեաց փոքրագոյնը։ Գոհացնում են այդ գայլերի որկորները, աւելի մեծ գազաններից խոյս տուած լինելու յոյսով։

*

Քանի գնում աւելի և աւելի հրամայական է դառնում հացի պահանջը։ Ամբարատէրերը ոսկիներ դիզելու իրենց տենչանքների սահմանում՝ աւելի և աւելի են թանգացնում. հացի գինը 38-ից հասնում է մինչև 54—56 դահեկան (մի չափը)։ Գիւղացին դրամ չունի, թէ ունեցած դրամը և թէ անասունների մի մասը ծախել է այս կամ այն կարիքը հոգալու. մի կերպ նա անցկացրեց ձմեռը—յոյսը գարնան վրայ դնելով, թէ Աստուած ողորմութեան դուռը կը բանայ։ Այսօր արդէն գարուն է, բայց ողորմութեան դուռը չը բացուեց։ Դա հաց չունի ուտելու. բայց այդ մեծ ցաւ չէ, կանաչ է դուրս եկել, և նա արմատիքով—խոտով, բոյսով քարշ կը տայ իր գոյութիւնը։ Մեծ ցաւը դեռ մնում է. սերմ չունի գիւղացին իր վարած, հերկած արտը սերմանելու. ահա այստեղ է որ մռայլ յուսահատութիւնը պատում է գիւղացուն, և նա միայն նոր է զգում իր սև օրը, իր վիճակի որ աստիճան դառը լինելը։ Ձմեռը նա աւելի մխիթարական դրութեան մէջ չէր. բայց և յոյսը գարնան վրայ էր դրել, կծկուած իր թոնրի շուրջը, կիսամերկ-պլոզ, ամբողջ երևակայութիւնը տանջում էր, թէ ի՞նչպէս մի ձմեռ գլուխ հանի խեղճ գիւղացին կարծում էր թէ սովն էլ անմիջական հետևանք է ձմրան, և ձմրան վերանալով սովն էլ չքանալու է։ Բայց նա մնաց յուսախափ, և աւելի վատթար դրութեան մէջ ընկաւ. եկաւ գարունը իր հետ բերելով—հակառակ սպասածին—աւելի ծանր հոգսեր ու ճնշող մտատանջութիւններ։ Լաւ է գարունը, կենսատու, ուրախ, զուարթ, բայց ոչ այս երկրի և ոչ էլ այս ժողովրդի համար։ Դա աւելի խորը կերպով է ցնցում ազգաբնակութիւնը, իր չքաւորութեան պատկերով։ Քանի որ նա այսօր սերմ չունի, էլ ի՞նչ յոյս ունենայ հունձքի վրայ, ապագայ ապրուստի վրայ, նոր-նոր կարիքներին, հարկերին և այլն պահանջներին գոհացում տալու ի՞նչ ակնկալութիւն։

Եւրոպական շրջանակները (հիւպատոսարաններ, միսիոնարներ և այլն) գիտակ այս բոլորին, որևէ միջամտութիւն ցոյց չը տին արհեստական սովի առաջն առնելու. քաղաքում սովը համաճարակի բնաւորութիւն էր ստանում օրէցօր։ Հարիւրաւոր ամբոխը օրերով հաւաքւում էր հացավաճառների խանութների առաջ մի կըտոր հաց ձեռք բերելու, բայց օրնիբուն սպասելուց յետոյ կառավարութեան ոստիկաններով ցրւում էին դէպի իրենց տները դատարկաձեռն։ Ի՞նչ հիւպատոսների կամ այլ եւրոպացիների հոգն էր, չէ՞ որ նրանց

համար յատուկ, լաւ ցորենի մաքուր հաց էր պատրաստւում, նրանք անձնականապէս բողոքելու կամ դժգոհելու պատճառ չունէին։

Վանի ամերիկեան միսիոնարների բողոքական շրջանակը քաղաքի էքաւոր ընտանիքներից մի քանի տասնեակ անձանց սկսեց օրւայ պարէն հաց բաժանել. այդ բանը առիթ տւեց շրջանի գիւղերի բազմաթիւ դիմումների՝ օգնութեան ակնկալութեամբ։ Շրջանակը արձագանք տւեց և գործակալներ հանեց գիւղերը — կարօտեալներին ցուցակագրելու՝ նրանց նպաստ (դրամական) և սերմացու տալու դիտումով։ Մի թշւառութեան դուռն էլ այս հանգամանքը բացաւ ժողովրդեան համար. բոլորը լիայոյս, մեծ-մեծ ակնկալութիւններով ամիսներ շարունակ սպասեցին, ձեռները ծալած այդ օգնութեան։ Ցուցակագրւածներին անկարող գոհացում տալ — սկսում են սահմանափակել կարօտեալների թիւը և բաշխում են իւրաքանչիւր կարօտեալ անձին ոչ աւելի, քան 60-ական փարայ (ռուսական 12 կոպ.). ի՞նչ պէտք է հոգացի այդ միանւագ ստացած 60-ական փարայով, գայթակղութեան դուռն է միայն և խռովութիւնների պատճառ... ի՞նչ ասես չէ անցել դարձել — կռիւ, խայտառակութիւններ, թշնամանք՝ ստացող և չը ստացող ցուցակագրւած կարօտեալների մէջ։ Իսկ սերմացու տալը մինչև օրս չիրականացաւ. և դատարկ յուսադրանքը խաբեց կարօտեալներին, ստիպեց իրենց գլխի ճարը տեսնելու, դժբախտաբար իրենց ունեցածը չ'ունեցածը ծախելու, ևքանի ուշ չէր, միբուռը սերմ ճարելու հողին պահ տալու, նոր հունձք ակնկալելու։

Քրիստոնէական գաղափարի այդ առաքեալները ամեն բան իրենց շահի տեսակէտով են չափում ու ձևում... Այդ բոլոր տարրերը կան թիւրքահայ ժողովրդի թէ տնտեսական և թէ քաղաքական կեանքում. և ահա շահագործումն իր անսահմանութեան մէջ։ Ինչ և է, ժողովուրդը — խեղճ, չունևոր մասսան — դիմում է նրանց, չէ՞ որ քաղց յագեցնելը որևէ բարոյական օրէնք չէ ճանաչում. ճիշտ նոյն վիճակի մէջ է հայ ազգաբնակութիւնը. առանց զգալու թէ ի՞նչ բարոյական զոհողութեան գնով է ձեռք բերում այդ նպաստը, 60-ական փարան, առանց իրեն հաշիւ տալու, նա շարունակ դիմումներ է անում... Բայց ի՞նչ ասել քրիստոնէական գաղափարի այդ առաքեալներին, որոնք շահագործում են ժողովրդի էքաւորութիւնը, և քրիստոնէական բարերարութիւնը՝ գծուծ „բարերարութեան" են վերածում՝ իրենց տրիտուր ակընկալութիւններով — ժողովուրդ որսալու դիտումներով։ Բայց թողնենք դրանց։

Կառավարութիւնը — իրօքցանկացող այս բոլորին — խաբուսիկ հնարներ միշտ գտնում է եթէ ոչ ժողովրդեան, գէթ օտարների աչքին թոզ փչելու համար։ Զրի կերպով հանդիսանալու համար իբրև „բարեխնամ" կառավարութիւն իր հպատակներին, իբրև կարեկից և օգնող ժողովրդին՝ ներկայ տնտեսական տագնապի ժամին, նա իր բանկայից (գանձարանից) ամանսով դրամ է բաց թողնում գիւղական հասարակութիւններին, սկսած 200-ից մինչև 2000 և աւելի պահեկան (ի հարկէ որոշ, կալւածական ապահով երաշխաւորութեան պայմանով)։ Այդ դրամը վերցնում են հարուստ, անուանի մարդիկ՝ չունևորներին բաժանելու՝ նրանց անհրաժեշտ պէտքերը հոգալու համար, չմոռանանք ասել, որ մինչև այդ դրամը ստանալ գիւղ հասցնելը որոշ ծիսակատարութիւնները մի յայտնի %-ը կուլ են տալիս արդէն։ Բայց ի՞նչ են այդ էքաւոր և սոված գիւղացիների „անմիջական կարիքները". ոչ այլ ինչ եթէ ոչ կառավարութեան „օրինաւոր" ճանաչւած հարկերի պակասորդը լրացնելու, կամ բաղքիայի յետաձգութեան և այլ անակնկալ նոր երևան եկած պահանջների դէմ՝ պաշտօնեաներին քառափուլ (կշառք) տալը։ Ա՛հա այս օգուտն է տալիս բանկան — մասամբ թեթևացնում է ժողովրդի չարչարանքը — թէև այդ դրամով գէթ նպաստոյն չափով սովի առաջն երբէք չէ առնւում, և դեռ գալիք տարիների պարտքերի վրայ նոր-նոր պարտքեր է աւելացնում։

Մի նոր ձևի խաղ ևս Վասպուրականի գաւառներից մէկում։ Կառավարութեան համար ակընյայտ է, որ հայ ժողովուրդը դարերէ ի վեր կապւած է իր կրօնի հետ միս կողմից նա (կառավարութիւնը) չէ կարող անտես առնել ժողովրդեան մէջ առաջ եկած տրամադրութիւնը դէպի յեղափոխութիւնը։ Ժողովրդեան այդ ինքնաբերաբար յեղափոխութեան փարելը (լինի գինտակցօրէն թէ անգիտակից՝ միայն որևէ ակնկալութեան յոյսով իր վիճակի բարեփոխութեան նկատմամբ), չէ՞ որ չարիք է՝ իր կործանիչ քաղաքականութեան դէմ։ Ուստի նոր նոր միջոցներ է մտածում. յայտնի է, որ մինչև օրս կառավարութիւնը իր բոլոր քայլերը և գիւային ծրագիրները ի գործ է դրել՝ միշտ վարպետութեամբ քողարկելով յեղափոխական պատրւակների տակ, ամեն բանի մէջ յեղափոխականներին սկզբնապատճառն ու վախճանը համարել։ — այսօր նա գալիս է մի ուրիշ ծրագրով։ Մինչև օրս բացարձակ հային „գեաւուր" համարող կառավարութիւնը ուզում է հայ ժողովրդեան հաճելի դառնալ. գաւառի միւդուրը, (գաւառապետը) գէթ ներկայումս այդպիսի մտքերով է մօտենում ժողովրդեան սիրաշահելու համար — կառավարութեան հաշտ աչքով նայելու դիտումով։ Նա այցելում է իր գաւառի հայ գիւղերի եկեղեցիները, մտիկ տալիս, յորդորներ կարդում՝ եկեղեցիները մաքուր և բարեկարգ պահելու սէր և յարգանք տածելու դէպի եկեղեցիները, զոհաբերութիւններ անելու — նոյնիսկ ստիպողութեան տակ դրամական ծախսերը հոգալու և այլն. . Ուշ է արդէն թիւրք կառավարութեան համար՝ այդ տեսակէտով օգտւելու։ Եթէ այդ „հնարագէտ", „դիպլօմատ" կառավարութիւնը սկզբից և եթ հաշտ աչքով նայէր քրիստոնեայ ազգաբնակութեան — թերևս յաջողութիւն ունենար կամ չունենար, դա այլ խնդիր է. բայց ներկայումս նա անկարող է թոզ փչել հայերի աչքին։ Կոցւած աչքեր չը կան այլևս, և ոչ այնքան միամիտ հաւատացողներ՝ այդ խաղերին։ Գէթ ինքը կառավարութիւնը թոզ ի զուր ջանքեր չը թափի մեզ համոզելու, թէ հաշտ և ներողամիտ աչքով է նայում դէպի մեր կրօնը, որի հաւատացողներին ներկայումս էլ չէ քաշւում պաշտօնապէս „գեաւուր" անուանել և իբրև „գեաւուրների"՝ իրաւազուրկ ճանաչել։

Հայ ժողովուրդ, բաւական է որքան խաբուսիկ երևոյթները եկան քեզ մոլորեցնելու։ Ժամանակը հասել է ձեռք քաշելու մի անգամ ընդմիշտ այդ կեղծ ու պատիր, „բարեխնամ", „հաշտ վերաբերմունքից"։ Քո փրկութիւնը քեզմէ յուսա՛, յոյսդ դիր քո թշւառ,

բայց տակաւին կենսունակ բազուկներիդ ու բարոյական ուժերիդ վրայ. . .

II

30 յուլիս.

Կառավարութիւնը՝ միանգամայն կոյր ժողովրդեան ներկայ տնտեսական ճգնաժամի դիմաց՝ աւելի խիստ և յախուռն կերպով է հաւաքել տալիս յաւելեալ տուրքերը—բաղքեանները։* Գալիս են քննիչները" (ժամուռները), ժողովուրդը արդէն շատոնց ծանօթ նրանց արարքներին՝ խոյս է տալիս, գիւղի ռէսը և իր աղաները կրակն են ընկնում։ Պէտք է ճարել. սկսւում է խայտառակ սակարկութիւնը այդ քննիչների կողմից ամենաբարձր չափից մինչև ամենափոքրը։ Բռնեցնում են միշտ 50-ից և իջնում մինչև 10 կամ 15-ի օսմանեան ոսկու. պէտք է տալ թէկուզ ինչ կերպ էլ որ լինի. որքան ուշացնեն այնքան աւելի նիւթապէս քայքայելու են. եկողները ապրում են գիւղացու հաշուով. ոչ մի բանի չեն հաւանում—իրենց ուզածն են անում, էլ գարի, խոտ ձիաներին ամենայն առատութեամբ իրենց համար հաց, իւղ, հաւ անհաշիւ, ստիպած շուտ հեռացնելու գիւղից. գնում են մօտակայ թիւրքի, քիւրդ աղաների մօտ և սալաֆին (տոկոսի) դիմում. վերցնում են 10—20 ոսկի մէկ կամ երկու ամսով վճարելով 3—6 ոսկի տոկոս։ Բերում են ճանապարհ ձգում, և աղատ շունչ քաշում։ Թասելդաչիներին կարողացել են բաւականութիւն տալ 15 ոսկով. իսկ 15 ոսկին ճարել են հետևեալ կերպով. 10 ոսկին վերցրել են մօտակայ քիւրդ աղայից մէկ ամիս ժամանակով—գումարի վրայ աւելացնելով 3 ոսկի տոկոս,—իսկ 5 ոսկին վերցրել են իրենց գիւղի մի հայից երկու ամիս ժամանակով տալով 6 ոսկու մուրհակ։ Երբ ամիսը լրացել է քիւրդ աղան պահանջել է իւր դրամը։ Ի՞նչ անել, եթէ չը վճարել՝ ամէն ամիս պարտաւոր են նորոգել մուրհակը՝ մայր գումարի վերայ աւելացնելով 3 ոսկի։ Գնում բանքայից վերցնում են 10 ոսկի վճարում քիւրդ աղային. իսկ մնացած 3 ոսկուն 1 ½ ոսկի նորից տոկոս նշանակում մի ամիս ժամանակով՝ վճարելու պայմանով։ Իսկ հայից վերցրածը դեռ մնում է։ Դեռ գիւղացիք գոհ են, որ այսպէս թեթև պրծան—թէ ոչ՝ 10—15 ոսկի հէնց նրանց ծախսն էր նստելու։ Ունևորները կոպէկի վերայ դողում են, իսկ երբ չը կայ, անհաշիւ նետւում՝ են պարտքերի գիրկը, ի՞նչ անեն, դժոխային վիճակում ի՞նչից վախենան. ապագայի ոչ մի յոյս—փրկութեան ոչ մի ելք այս դրութիւնից։ Մի պերճախօս ապացոյց։ Այս հարկերը վճարելու պատճառով հարկադրուածներից մէկը ծախում է իւր 6 չափ ցանած արտը մի քիւրդի, փոխարէնը առնելով 5½ չափ գարի։ Թողնում եմ ձեզ հաշուելու, թէ դա ի՞նչ տոկոս է նստելու։ Ի՛ր արտը, ինքը վարել, հերկել, ցանել և այսօր, երբ կանաչել է և 2—3 ամսից հունձ է տալու, ծախում է իր սերմի չափից էլ պակաս արժողութեամբ։ Բայց ինչպէ՞ս մեղադրել այդ մարդուն. չէ՞ որ խեղդողը ձեռքը տերևների է գցում՝ փրկուելու յոյսով։ Այս դէպքը բացառիկ երևոյթ չէ, այլ շատ շատերից մէկը։ Հարիւրաւոր արտեր են ծախւում, և թերևս այս է պատճառը, որ գիւղացու ձեռքին լաւ հողեր չէ մնացել (բացառութիւն կազմում են հարուստները), անցել է կամ քիւրդ աղաների ձեռքը, կամ կառավարութեան—որը իր բանքայից դրամ է բաց թողնում „ողորմածաբար," ժողովրդեան „բարիք" անելու քողի տակ—բայց իրօք բոլոր կալուածները, արտերը, այգիները, անտառները և այլն գրաւելու դիտումով և դա անարգելի օրէն յաջողւում է։

Այդ ձևով հաւաքած բաղքեաններից դեռ կառավարութեան գանձարան էլ չէ մտնում. օրինակ Հայոց ձորի գիւղերից մէկում յունուար ամսին գազանային բռնութեամբ հաւաքած 3—4000 դահեկանը դեռ „Սանդըղ փուլի" չէ արած, և այդ գիւղացիք դեռ գնում գալիս, խնդրում աղաչում են, որ „քոչանի" (ստացական) ստանան, բայց իզուր. այս է եղել սկզբից ի վեր տաճկահայի դրութիւնը և կառավարութեան վերաբերմունքը, բայց ներկայումս այլևս ուժ չէ մնացել. միանգամայն քաքայել է տնտեսապէս—խեղդել մինչև կոկորդը քիւրդ աղաների պարտքերի տակ։ (Հայ հարուստը զգուշանում է տոկոսով դրամ վճարել, նա վախենում է յեղափոխականներից, իրեն լաւ է ցոյց տալիս, թէև խուլ անկիւններում գաղտագողի շարունակում է իր վաշխառութիւնը)։

Հացի գինը այժմ աւելի է բարձրանում—մի բան, որ վկայում է, թէ նա պակասում է։ Եթէ կան մի կամ մի քանի մասնաւոր մարդկանց մօտ, նրանք էլ ըստ իրենց աւանդական սովորութեան շահագործում են՝ օր օրի վրայ արժէքը բարձրացնելով։ Այժմս դրամ ունեցողները չեն կարողանում 62—64 դահեկանով մի չափ ցորեն ձեռք ձգել. իսկ ի՞նչ քարը տայ գլխով աղքատը—գիւղացին, երբ 5—10 փարայ դրամ էլ չունի։ Սկզբից այլևս ձեռք պէտք է քաշել արդէն ուշ է, և ոչ մի միտք էլ չունի այժմս սերմ գցել հողի մէջ—իսկ բնութիւնը յամառում է իր երաշտութեան մէջ։

Զը գիտենք, սա ի՞նչ խաղ է, որ ծրագրուած է։ Շշուկներ են տարածւում ժողովրդեան մէջ, թէ կառավարութիւնը երկու հազար չափ ցորեն է բաց թողել իր սեփական գանձարանից՝ ժողովրդեան սերմ բաշխելու համար։ Հաւա՞տանք այս լուրին։ Իբր թէ կազմակերպւում է յատուկ յանձնաժողով՝ ցուցակագրելու կարօտեալներին, և օրինաւոր ու արդարացի բաշխումը խստիւ պատուիրուած է. որևէ զեղծում գործողը անմիջական պատասխանատուութեան է ենթարկւելու։ Զգտենք, ամէն մի հնար գործ դնել ժողովրդեան դէպի կառավարութիւնը լաւ տրամադրելու, նրանից ակնկալութիւններ ունենալու—ահա այս են ներկայումս կառավարութեան ջանքերը. բայց կը յաջո՞ղի արդեօք—այդ էլ խնդիր է։

*) Թանօր. 96 թւականին Վասպուրականի նահանգի ընդհանուր կոտորածից եւ թալանից յետոյ՝ „բարեխնամ" կառավարութիւնը իբրեւ թեթեւութիւն ժողովրդեան՝ երեք տարով ազատ է թողել կառավարական հարկերից՝ յաջորդ տարիներում գանձելու պայմանով—եւ այդ երեք տարայ յետնեալ հարկերն են, որ ամեն տարի հաւաքում են արտաքոյ կարգի—սովորական հարկերից։ Ամեն անգամ (առանց որոշ ժամանակի կամ տարայ որոշ եղանակին, ինչպէս օրինակ ընդունուած է Ռուսաստանում—գարնան եւ աշնան.) երբ կառավարութեան պաշտօնեաները պէտք կը զգան դրամի—դիցուք զօրքերի ամսական կամ աւելի նիշտ՝ ապրուստը հոգալու—անմիջապէս թաղեցիներ պատրաստ են դուրս գալու գիւղերը։

ԿՈՎԿԱՍ

ԴԷՊԲԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ընթացիկ կեանքը օրէցօր աւելի ու աւելի անտանելի է դառնում ամբողջ Ռուսաստանում և մանաւանդ

Կովկասում։ Հայ հանգստութիւն, հայ կեանքի ու գոյքի ոչ մի ապահովութիւն, որովհետև կառավարութիւնը ամեն կողմից առաջ է քաշել խաւար ուժերը և նրանց լարել է հասարակութեան դէմ։ Մի կողմից թիւրք ամբոխին է արիւն հոսեցնում հայաբնակ վայրերում, իսկ միւս կողմից „խուլիգաններն“ են համարձակ քայլեր անում մարդաշատ քաղաքներում։

Թիֆլիսը դրանց գործունէութեան գլխաւոր կենտրոնն է դարձել և ոստիկանապետ Կովալեօվը նրանց եռանդուն կազմակերպողն ու ղեկավարը։ Վերջին ժամանակներս քանի ժողովներ, քանի՜ հայրենասիրական ցոյցեր կազմակերպեցին դրանք։

Բայց այդքանը բաւական չէր կառավարութեանը. նա զէնքեր է բաժանում դրանց „ինքնապաշտպանութեան համար“—si! Անցնում է մի քանի օր և խուլիգանները սկսում են գործադրել զէնքերը, աջ ու ձախ սպանելով բանւորական կազմակերպութիւնների ազդեցիկ անդամներին։

Այդ ամէնը մեծ խլրտում է առաջացնում բանւորների շրջանում. վերջապէս, վճռում են ընդհանուր գործադուլի միջոցով ստիպել կառավարութեանը զինաթափ անելու խուլիգաններին։ Կենտրոնական ղեկավար մարմինները հակառակում են այդ վճռին, բայց բանւորների յուզմունքն այնքան մեծ էր, որ դիմադրելն անհնարին էր դառնում։

Սկսեց գործադուլը, որի ամբողջ տևողութեան ընթացքում 8 օր շարունակ կեանքը կանգ էր առել բառիս բուն նշանակութեամբ. փակ էին բոլոր խանութները, չէր երթեւեկում տրամվայը։ Ամբողջ ոստիկանութիւնը, ժանդարմները և բաւական մեծ քանակութեամբ զինւորներ շրջում էին փողոցներում, կոտրատում էին փականքները և ստիպում բանալ խանութները. բայց ապարդիւն. մըտրակի ու մուրճի հարւածներով բացւած խանութը նորից փակւում էր և կեանքը նորից իր մեռած տեսքն էր ընդունում։

Վերջապէս ամսի 24—25-ին սոցիալ-դեմօկրատները որոշեցին յեղափոխական աւելի ակտիւ քայլեր առնել։ Բաղաքի զանազան մասերում մի քանի ռումբեր են գցում կօզակների և պրիստաւների վրայ։ Վնասները աննշան են լինում, բայց առաջացած խլրտումը շատ մեծ։ Կատաղած կօզակների խմբեր լցւում են փողոցները և աջ ու ձախ հտրւածում, սպանում ու ձերբակալում պատահած մարդկանց։

Ցայտարարւում է զինւորական դրութիւն. սակայն այդ բանը ժողովրդից ծածուկ է մնում 2—3 օր, որովհետև ոչ թերթ էր լոյս տեսնում և ոչ էլ տպարաններն էին աշխատում, որ հնարաւոր լինէր այդ մասին գոնէ մի լուր տպել։ Նոյն իսկ փոխարքայի տպարանը մասնակից էր գործադուլին։

Վերջապէս բանւորները որոշում են սկսել աշխատանքը, 27-ին։ Այդ ժամանակ փոխարքան հրաման է արձակում՝ 27-ին ով որ աշխատանքի չը դուրս գայ, նրան յանցաւոր համարել և խիստ պատժի ենթարկել։ Այդ հրամանը նորից կատաղեցնում է բանւորներին. նրանք իսկոյն վճռում են մի օր էլ շարունակել գործադուլը, շարունակել որպէսզի ամբարտաւան փոխարքայի խրոխտ հրամանը խայտառակ կերպով անկատար մնայ և նա համոզւի, թէ ինչ ոյժ է ներկայացնում յեղափոխական հոսանքը։ Վճիռը կատարւում է. 27-ին ամբողջ քաղաքը մեռած է մնում, իսկ 28-ին միայն բանւորական կազմակերպութիւնների կարգադրութեամբ, սկսում է իր սովորական կեանքը...

Սակայն զինւորական սոսկալի դրութիւնը դեռ շարունակւում է, փողոցներում վխտում են կօզակներն ու զինւորները։ Ամեն քայլափոխում և ամենքին խուզարկում են, առանց խտրութիւն դնելու տղամարդկանց և կանանց միջև։ Խուզարկում են ամենակոպիտ ձևերով, գրպանները, շորերի տակը։ Բայց այդ դեռ բոլորը չէ։ Խուզարկելիս թալանում էլ են։ Ի՞նչ կարելի է անել. եթէ բողոքեցիր, հրացանը ճակատիդ կուղղեն... Խուզարկում ու թալանում են ոչ միայն գիշերը, այլ և ցերեկով. մի փողոցից մինչև միւս փողոցն անցնելը մի 10 անգամ խուզարկում են։ Համեմատաբար աւելի ապահով է կառքով ու տրամվայով ման գալը...

Եւ դա կոչւում է կարգապահութիւն ու խաղաղութիւն։

*

Սակայն բոլոր նշաններից երևում է, որ ոչ Ռուսաստանում, ոչ էլ մասնաւորապէս Կովկասում դեռ երկար ժամանակ խաղաղութիւն չի հաստատուի։ Ստացուած տեղեկութիւններից երևում է, որ խլրտումը արդէն զօրքի մէջն է անցել։ Ալէքսանդրօպոլի մի գունդ զինւորներ անհնազանդութեան ցոյց են արել օֆիցէրների դէմ, դեռ նրանց յուզմունքը չէ դադարել և կարող է ապագայում աւելի խոշոր չափեր ընդունել։ Գանձակի մի գունդ իբրև բողոքի նշան հրաժարւել է կերակրից, պահանջելով դրութեան բարւոքում։

Այդ բոլորից կարելի է գաղափար կազմել, թէ որքան անտանելի պայմաններ է ստեղծել ռուս բռնակալ կառավարութիւնը։

*

Փոխարքայի օգնական Շիրինկինը վերջին օրերս վերադարձաւ Պետերբուրգից։ Թէ ինչ յանձնարարութիւններով վերադարձաւ — դա առայժմ գաղտնիք է։ Ցայտնի է միայն այն, որ իր հետ բերել է 40 գեղեցկուհիներ։

Գուցէ ընթերցողները կարծեն, թէ նա հարեմ է ուզում հիմնել, բայց այդպէս չէ։

Շիրինկինի նպատակը ոչ հարեմ պահելն է և ոչ էլ կովկասցիներին հաճոյք պատճառելը։

Նա այդ կանանց բերել է լրտեսական պաշտօնների համար և նրանք արդէն սկսել են եռանդուն գործունէութիւն։

Լրտես կին, լրտեսութիւն՝ սիրաբանական խաղերի միջոցով — ահա թէ ինչպիսի առաջադիմութիւն է անում Ռուսաստանը։

*

Աւչալայում բռնել են չորս փութ ուժանակ։ Թիֆլիզում մի քանի տեղեր բաց են արել ռումբի գործարաններ։ Թիօնէթի կողմերում ռուս զինւորները սպանել են իրենց կապիտանին և կարող է պատահել, որ ապստամբեն։ Նոյն տրամադրութիւնը նկատելի է և այլ տեղերի զինւորների մէջ, գլխաւորապէս սոցիալիստ-յեղափոխականների պրոպագանդի շնորհիւ։

Թիօնէթի կողմերը զինւորական մեծ ուժ է ուղարկւել՝ սկսւած խրովութիւնները զսպելու համար։

*

Գորու շրջանում գիւղացիները մահւան սպառնալիքով

Հարկադրել են ազնվականներին՝ հրատարակել լոգիրների մէջ, որ նրանք ձրիաբար տալիս են իրենց հողերը գիւղացիներին։ Մի ուրիշ կէտում, կօղակները կանչած լինելով կարգը վերահաստատելու, կրակ են արել գիւղացիների վրայ և սպանել են 19 հոգի։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

(Ն ա մ ա կ)

Երբ Բաղմումս սկսեց կոտորած ու թալան, տեղական զօրի դաշտում, մօտ 3 վերստ հեռաւորութեան վրայ, զինավարժութիւնը էր ըզբաղուած։ Դաւառապետը սուրհանդակ է ուղարկում և յայտնում, թէ զօրերը Բաղմում անհրաժեշտ են։ Հրամանատարը պատասխանում է, որ երբ զինավարժութիւնը վերջանայ, կը վերադառնայ Բաղամ։ Ճիշտ է, զօրերը վերադառնում են Բաղամ, բայց զնում են ոչ թէ աղէտի տեղը, այլ զօրանոց. այնտեղ նախ հաւաքում են, ապա փամփուշտներ են բաժանում զինուորներին և այլ ձեռնարկութիւններով զբաղում, որ տեւում է ամբողջ երեք ժամ։ Այնուհետև զալիս են աղէտի տեղը, ի զարմանս ամենի՝ կանգ են առնում պետական գանձարանի շինութեան առջև, հրացանները ցցում զետնի վրայ և իրենք գնում են վարչական մարմինների կարգադրութեամբ բազարի հրդեհը հանգցնելու, որպէսզի կրակը թիւրքերի խանութների վրայ չանցնի։ Մինչդեռ զօրի ոչխարի առաջ խանութները կոտրատ ում, թալանում էին, ապրանքները բեռնելով բացառապէս տանում էին և մարդկանց կոտորում... Կարծես ոչինչ չկար, ոչինչ չէր պատահել... Զինուորներն ու սրանց մենաւորները սառնասիրտ հանդիսատես էին այդ բոլորին։ Նոյն դերն էին կատարում ոստիկանապետն ու ոստիկաններ։ Ոստիկաններից շատերը եւ դրիստաւ Պաւլովը նոյն իսկ իրենք էին ատրճանակներ արձակում փախչող ու փրկութիւն որոնող հայերի ետեւից։ Դաւառապետի օգնական Դ ո գ ո բ ե ր ի ձ է ն եւ մի քանի ոստիկանական ատենեանաւորներ՝ կանգնած գանձարանի առաջ, ծխախոտերը բերանին՝ միայն հանդիսատես էին, թէ ի՞նչ է կատարւում իրենց շուրջը։ Ոստիկանութեան ներկայացուցիչները, փոխ-ճանճապետ Տարանօվսկու ղեկավարութեամբ, որոնք իրենց սանչով իբր թէ անզօր էին միջոցներ ձեռք առնել թիւրք կողոպտողների ու մարդասպանների դէմ, մեծ եռանդով այդ օրերը զանգենցնում էին հայերին, ե ւ ո՛չ թ է թ ի ւ ր ք ե ր ի ն։ Խուզարկում էին, որպէսզի դէնքերն յեն վերցնեն ու ձերբակալեն յեղափոխականներին, „մէղանէրին“։ Փոխ-ճանճապետն իրեն դիմող ու օգնութիւն հայցող հայերին հայհոյում էր, համարելով նրանց մեղսակիցներ կոտորածի եւ արժանի այդ տեսակ պատժի։ Իսկ Ջամար Ղուլի խանը աղէսի դիմակով հաւատացնում էր, թէ ինքն անզօր է այլ եւս զսպելու կատաղած խուժանին։ Խանը, որ երեւաւորում էր իւր պատով ու անձով, թէ հայ վանառականներին ոչինչ չի պատահի, նոյնպէս չտեսնելու էր տալիս, թէ ինչպէս են կոտորում իր խսմբերին միամտօրէն հաւատացած եւ իր մօտիվ ծանօթ վանառականներին։

Իսկ խուժանը անդադար երեք օրւայ ընթացքում փոխ-ճանճապետի, զօրի, ոստիկանութեան եւ այլ վարչական մարմինների աչքերի առաջ ազատ-համարձակ կրում էր շուկայից հայերի ապրանքը։ Թալանող ու կողոպտող խմբերի մի ղեկավարն էլ ոստիկանական գրասենեկի գործավար Միրզա Քիազում Կուլիբեկովն էր, որ թալանած ապրանքը տանում էր իր տունը։ Ապրանքները տանում էին երեք ճանապարհով. մէկը դէպի շրջակայ գիւղերը, միւսը դէպի երկու պանդուխտներ Բաղամի մէջ։ Այդ պանդուխտներից մէկն էլ, բանից դուրս է գալիս, եղել է Բանիմ խանի ապարանքը։ Ահա մի ռուս տիկնոջ Անտոնիա Կուլիկովայի ցուցմունքը. այդ տիկինը, մի ռուս ասիանանաւորի կին, կոտորածի օրը վախից փախել, ապաստանել էր Բանիմ խանի բնակարանում։ Բանիմ խանի պալատը անդադար գալիս էին թիւրքեր եւ խնդրում էին իրենց թոյլատրել՝ սպանել տեղացի յոյնի վանառական Պողոսեանին, Հազարապետ Սիմէօնեանին ու Դարչիկեանին։ Երբ ես զնում էի Բանիմ խանի ապարանքը, նա փոխ ճանճապետի հետ, ձիով, ուղեկցութեամբ ձիաւոր ոստիկանների՝ արշաւում էին փողոցով, իսկ սրանց մօտով թիւրքերը տանում էին թալանած քանզգանի խմիչքները, տանում էին Բանիմ խանի ապարանքը՝ աշտարակի տակը զետնած դռնով։ Սրա զաւիթն էին շարտում դրսի պատի կողմից հակերով կաշիներ, որոնք յեռոյ տանում էին Հկուղը պահելու։ Բանիմ խանի ծառաները տան վերեւի յարկում սնդուկների մէջ շարում էին բերած զորգերը, կերպասեղէնների ու ապրեշումի կտորները։ Բանիմ խանը տեսնում էր իւր աչքերով այդ բոլորը. նոյն իսկ խանի որդին՝ ձաքօն բերում էր վերեւ զանազան ապրանքներ։ Ճաշի ժամանակ Երեւանի խաղամգրոխը, որ նկել էր Կարապետ վարդապետի հետ Նախիջեւան, խնդրում էր փոխ-ճանճապետին, որ սա վերադարձնի ոստէ միջոց ձեռք առնի կոտորածը դադարեցնելու համար։ Փոխ-ճանճապետն Տարանօվսկին պատասխանում է, որ ոչ մի ուժ, հնարաւորութիւն չունի այդ անելու. ճօ՛ չպէտք է իր գլուխը դնի խիստ հրամանների առաջ։ Այս ասելով փոխ-ճանճապետն էրգում էր մի ինչ որ զաւրք երգ եւ մասներ խաղացնում էր սեղանի վրայ, ասես պատանեաց խիելիս լինեն։ Ճաշից յետոյ, երբ Բանիմ խանի պլուխը տաքացել էր, հարց է տալիս փոխ-ճանճապետին՝„Ի՞նչ է լաւ՝ փո՞ղ, գեղցիկ աղջի՞կ, թէ՞ երաժշտութիւն։“ Փոխ-ճանճապետը նախադասում է գեղցիկ աղջիկ ու երաժշտութիւն։ Բանիմ խանի ապարանքի շրջապատող այգում գետնի մէջ թաղում էին արկղներով. սնդուկներով թալանած շատ իրեր, որոնք անդադար քարուում էին խանի տունը։

Կոտորածից ու թալանից յետոյ արդէն փոխ-ճանճապետը հիանալի է. „լսում է թոյլ հրացանաձգութիւն, եւ ձեռնարկել եմ բոլոր աննրաժեշտ միջոցները։“ Փոխ-ճանճապետը սամնուրէմ է ասում էր, որ առաջինը սկսել են հայերը կրակ արձակել։ Ասում են, որ փոխ-ճանճապետը հրաժեշտ տալ հիւրասէր խանները ու հիւրասիրելի Երեւան, նրա հետեւից գնաց հասէ մի մուրզան, լի ապրանքով, իբրեւ ընծայ խանների կողմից։ Հասկանալի է, թէ ինչ ընծաներ էին դրանք...

Ահա այսպէս կատարւեց Նախիջեւանի Բաղամի հայերի կոտորածն ու թալանը, ողբերգութիւն, որ յաւէտ անջնջելի կը մնայ Կովկասի պատմութեան մէջ։ Նա կը հրահանգէ հայերին՝ միշտ արթուն մնալ եւ այլեւս միամտօրէն չը հաւատալով զանազան ստորագրութեան կամ մարդկանց, լինեն դրանք կառավարութեան ներկայացուցիչներ կամ մասնաւոր անձինք։ Նա կասէ հանդէպ Բաղամայիրք ասխարինն, թէ ինչ յուզական, մաքիավելական Բաղամակոնութիւն էր գործադրում ռուս կառավարութիւնը հայ ժողովրդի վերաբերմամբ։ Նախիջեւանից կռուի ալիքները տարածւեցին ամբողջ գաւառում, ամբողջ Երեւանի հանանգում։ Թիւրքերն իրենց Իրեսի դիմակները պատռեցին։ Թիւրք խուժանը, որտեղ իրեն միշ թէ շատ ուժեղ էր զգում, բարձրացնում էր գլուխը դրօշակներ, վրան „Ալի“ ձեռքը նկարած, աղաղակում էր „Եա՛ Ալի, լու ջնաս“ եւ անմեղ զոհերի արիւն էր, որ թափւում էր հայ գիւղերում, հայ հիւսակոնի հանգիստում։

Ես անցայ Նախիջեւանի գաւառի շատ գիւղերով։ Զարհուրելի, տպաւորութիւն է թողնում ամբողջ տեսարանը։ Թալանած գիւղեր, այրուած տներ, Լեղեղցիներ, դպրոցներ... Լցնուած, բայց դարձ հաւաքածներից յուսահատուած գիւղացիներ, Երկ հարուստ, այսօր կօղեկի կարօտ, հիւանդ եւ հաց մուրացող,.. Ո՞ր Բաղամակիրք մարդը, ո՞ր միշ թէ շատ ազնիւ զգացմունքներ չէր մարդ կարող է արդարացնել այն բարբարոսական, այն վայրենի, այն անխիղճ, անասնական գործողութիւնները, որոնք տեղի ունեցան Նախիջեւանում եւ ամբողջ Երեւանի հանանգում։ Կասեն թէ, դա տգէտ ամբոխն էր. կուրացած խուժանը. բայց ո՞վ էր այդ ամբոխի դեկավարը, թէ ոչ իրենց ինտելիգենտ կոչող թիւրքերը, համալսարանականներ եւ այլ բարձրասիստան թիւրքանձնաւորութիւններ։ Սկզբնական հնութիւնը հարիւրաւոր վկաների ցուցմունքների հիման վրայ՝ այժմ կազմել է մի ամբողջ ցուցակ այն անձնաւորութիւնների, որոնք գաղտնի ուրգայքներ են լարել հայերի դէմ, գենել թիւրքերին, դրդել նրանց՝ հայերին կոտորել։ Նրանց մէջ գլխաւոր եւ առաջնակարգ տեղը բռնում են զանազան խաներ, որոնց հրահանգներով ղեկավարում էր խուժանը, ինչպէս փաստերն են ցոյց տալիս։

Այդ, Նախիջեւանի կոտորածը մի ազգանուն էր։ Մայիսի 12-ից սկսեցին գաւառի գիւղերի հայ ժողովրդի վրայ անդադար յարձակումներ ու թալանները։ Մինչեւ այսօր յարձակման են ենթարկւած գաւառում 47 գիւղեր, որոնցից միանգամայն աւերուած ու կողոպտւած 16 եւ բնակիչներից զրկած 19 գիւղ։ Կիսաւեր, բայց ամբողջովին թալանած 10 գիւղ. յարձակման են ենթարկւած ու մասնակի կերպով թալանած 18 գիւղ։ Բաղամում եւ գաւառում սպանւածների թիւը հասնում է մօտաւորապէս 300 ի, վիրաւորներինը 59. անհետ կորել են 7 հոգի։ Թալանւած գոյքի, ապրանքի, փչացրած արտերի արժէքը, որ այսօր կորցրել է Նախիջեւանի գաւառի հայ ժողովուրդը, հաւատած է 8 միլիոն ռուբլի։ Մի քանի նշանաւոր գիւղերի յարձակմամբ հանանոս պատմութիւնը կանեմ հետեւեալ թղթակցութեանս մէջ։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ՉԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

—

Գօրիս, յուլիսի 20.

Անցեալ յունիսի 25-ին ցերեկով մօտ ժամը 12-ին Սիսիանի Շաղատ գիւղացիք գուժկան են ուղարկում Մարզա գիւղի բնակիչների մօտ և օգնութիւն խնդրում, որովհետև այդ շրջանում յայտնի աւազակապետ Մուրթուզան իր խմբով և թափառական թուրքերից ընտրած ուժերով յարձակում էր գործել և շաղատցոց 105 գլուխ գոմեշներն ու կովերը քշել։ (ինձ թւում է, թէ այս թիւը չափազանցրած է. ոմանց ասելով, տարած է 4 գոմէշ։ Ստոյգ տեղեկութիւններ այդ մասին պակասում են)։ Մուրադը իր խմբով տեղացիների հետ միասին շտապում է անցքի տեղը օգնութեան։ Կռիւը սկսւում է։ Շաղատում գտնւող կոզակները և կուող հայերի մի մասը կուի թունդ ժամանակ թողնում են մազրեցոց ու փախչում։ Մուրադը քաջութեամբ ու աջողութեամբ մազրեցոց հետ առաջ է տանում գործը։ Ամենքը հիացած պատմում են, թէ ինչպէս Մուրադը՝ „տղե՞րք այն սպիտակ ձիաւորին նայեցէք“ ասելով, ահագին տարածութիւնից գլորում է աւազակապետ Մուրթուզին։ Մի ուրիշը՝ Ալիլու գիւղացի Գասպարը (այժմ վիրաւոր) էլի վաղօրոք իմաց տալով, գլորում է Մուրթուզի մի այլ ընկերոջ։ Միւս տղերքն էլ սատկեցնում են Մուրթուզի միւս երկու ընկերներին ևս, որից յետոյ թուրքերը դիմում են խայտառակ փախուստի։ Շաղատցոց հաւարից քիչ յետոյ, երբ մազրեցիք Մուրադի հետ արդէն վտանգւած շատաղցոց օգնութեան են գնացած լինում, մի այլ հաւար է գալիս Մազրա գիւղի հիւսիս-արևմտեան կողմը գտնւող Ուսուրլուի թրքական „Իւրդ“ կոչւած հանդին կից հայերի հանդից, թէ թուրքերը քշեցին մազրեցոց 410 գառները և 12 գլուխ եզը։ Ինչպէս վկայում է, Մազրա գիւղի խաշնարածը, մի քիւրդ է լինում, որ գառները իրը արածացնելու նպատակով մօտեցնում է նրանց Ուսուրլուի Իւրդին, հեշտացնելով յարձակւողների գործը, որոնց օգնութեամբ և քշում է հօտը։ Ինքը քիւրդ հովիւը մինչև այժմ էլ չկայ, չէ գալիս հայերի մօտ։ Այս հաւարին վրայ են հասնում մի քանի մազրեցիներ (մեծամասնութիւնը շաղատցոց օգնութեան են գնացած լինում) և մօտ 20-ի չափ բրոնակոթցիներ, որոնց սակայն ոչինչ չի յաջողւում յետ խլել։

Կռիւը կատաղի է դառնում։ Մուրթուզի մարդիկը շաղատցոց ապրանքը քշել են սկսում դէպի Ուսուրլուի կողմերը և այդպիսով կուող 2 կողմերի շարքերը աւելի խտանում են։ Մուրադը իր խմբով անցնում է թշնամու ետևը և սկսում ջարդը։ Փախած թուրքերի օքաները մատնւում են տղայոց ձեռքը։ Կատաղած մազրեցիք չեն խնայում կանանց և երեխայոց։ Ջարդը սոսկում է առաջ բերում թուրքերի մէջ։ Այդ կատաղի կռւում մերոնցից վիրաւորւում են 3 հոգի։ Վիրաւորւածներն են. 1) մազրեցի Կարապետ Ադամեանը՝ աջ ուսից, 2) նոյն գիւղացի Մուցի Մաթոսեանը (Միքայէլ Մատթէոսեան) ձախ թշից և 3) Ալիլու գիւղացի յայտնի Գասպարը ձախ ոտքից. մոսինու գնդակի վէրքեր են։ Լուրջ վէրքը Գասպարինն է։

Ինչ ասել կուզէ, որ գործի տեղն է հասնում մեր մամուլի գոված գաւառապետ Աւեալեանին, վրդովւում է իր գաւառում կատարւած անկարգութեան լուրը առնելով, կատաղում է, որ Հայերը անխղճօրէն կոտորել են և ոչ կոտորւել։ Մազրեցոց մեղադրելով, 6 հոգու բանտարկում է և գործին այն ընթացքն է տալիս, որ իբր թէ հողային վէճի արդիւնք է այդ եալն, և հայհոյում է հայերին։ Սիսիանի այդ մասում գըտնւում է և նրա՝ Աւալեանի արբանեակ Շախսուար բէկը, մի յայտնի թուրքի փեսայ որը ամեն կերպ գրգռում է թուրքերին հայերի դէմ զինում և պատրաստել է տալիս ընդհանուր ուժերով յարձակւելու Մազրայի և շրջակայ գիւղերի վրայ։ Այդ մտքով մարդիկ է ուղարկում Գարգառի հովտի թուրքերին և նրանց ուշադրութիւնը հայերի հարստութեան վրայ հրաւիրելով (որի մի մեծ մասը իբր թէ խլել են և թուրք ընտանիքների վրայ ահագին չափով աւար բաժանել), կոչ է անում դրսից նոր ուժեր բերելու՝ մեծագոյն աւարառութեան համար։ Ձայն է ընկնում ամեն տեղ և ահա հաւաքում են նոր ուժեր։ Ամսոյս 1-ի գիշերը, մի թուրք պրիստաւի վկայութեամբ, (սա լաւ մարդ է) Խնձորեսկ գիւղի վրայով Ջիբրայէլից անցել են 80 զինւած թուրքեր։ Այդ մասին տեղոյս գաւառապետին հեռագրով իմաց է տւել և Ջիբրայիլի գաւառապետը։ Վերջինս երէկ առաւօտեան շատ շուտով քսանաչափ կօզակ ուղարկեց 80 զինեալ թուրքերի ետևից։ Աւալեանին հեռագրով դիմում է Նախիջևանի գաւառապետին և յայտնելով այդ մասին, խնդրում է նոր ուժեր կենտրոնացնել Մազրայի շուրջը։ Իսկ իր կօզակներին հրաման է գրում պատրաստ լինել և ցրել թուրքերին յարձակման ժամանակ։ Մի խօսքով անուրանալի է և այն, որ մարդը միջոցներ ձեռք առաւ, գոնէ առ երեսս. տեսնենք վերջը ինչ կը լինի։ Թուրքերի և հայերի մէջ Սիսիանի վերոյիշեալ պաշտօնակատար Շախսուար բէկը աշխատում է հաշտութիւն գցել, աշխատելով հայերից առնել սպանւած թուրքերի արնագինը... բայց դա, Մուրադի ասելով, միայն պատրւակ է։ Նա այդպիսով միջոց է գտնում բոլոր թուրքերին հաւաքելու մի տեղ և զէնք ու փամփուշտ բաժանելու։ Նոր ուժեր է հաւաքում և ձայն կայ, թէ շուտով Մազրան ու շրջակայ գիւղերը կ'ենթարկւին յարձակման։ Բայց „Դաշնակցութեան“ կտրիճներն էլ քնած չեն...

Մուրադի և ընկերների ցոյց տւած քաջութիւնը մեծ վստահութիւն է առաջ բերում տեղական ժողովրդի մէջ՝ դէպի կազմակերպութիւնը։ Ամենքը օրհնում են խմբի տղաներին։ Գիւղերը պահում են նրանց աչքի լոյսի պէս։—Ներսէս վարդապետի հարցին՝ թէ ուզում ե՞ն կօզակներ ունենալ՝ գիւղացիները պատասխանում են, թէ նրանք կուզէին ունենալ 20 կօզակի տեղ՝ 3 „խմբի տղա“։

Գաւառապետ Աւալեանին մէկ գոյնի մարդ չէ։ Նա անում է և այս և այն։ Օրինակ, Մագրայի դէպքը նա վերագրում է հայերին, անիրաւացի կերպով և պատճառ է բռնում հողային հարցը, որ իսկի կապ չունի գործի հետ։ Ճիշտ է, հողային վէճ կայ թուրքերի և մազրեցոց մէջ, սակայն բոլորովին այդ առթիւ չէ, որ սկսւել է կռիւը։ Թուրքերը յետոյ են հարցը հողայինի վերածել՝ իրենց արածը բողարկելու համար։ Ուրիշ փաստ։ Պատահում է, որ Աւալեանի ստրաժնիկները զէնքեր են խլում հայերից և նա միջոցներ չէ ձեռք առնում դրա դէմ։

ԱՐԻՆՈՏ ԱՆՅՔԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

(Նամակ)

—

Շարունակում եմ նկարագրել թիւրքերի յարձակման ենթարկած հայ գիւղերի բնորոշ մի քանի դէպքերն ու իրողութիւնները։

1. Ե ա ր մ Ջ ա զ ա ա հայկական գիւղ է և ունի 127 տուն։ Մայիսի 14-ին առաւաւտեան ժամը 8-ին շրջակայ գաշտերի վրայ սկսեցին երևալ խումբ խումբ թիւրքեր, որոնք հեռաւոր տաւարանում էին։ Հայերը ժողովեցին իրենց կանանց ու երեխաներին և ուղարկեցին Շբխմամուտ։ Գիւղի տղայ.քը բաժանուելով խմբերի, 8—10 հոգուց, բռնեցին շրջակայ գիրքերը, որպէսզի ներս չթողնեն թիւրքերին։ Ժամը 11-ին թիւրքերն ահագին զառուզով գաշուեցով, „եա՞ Ալի բուլՀամ", 3 կողմից գրոհ տուին գիւղի վրայ։ Հայերը սկսեցին հրացան արձակել, ապանեցին թիւրքերից 8 հոգի։ Եր հայերի հրանիւթը ապառուեց, այլ ևս աշխոյժ չունենալով հրացաններից արձակելու, Եարմջեցիք սկսեցին բոլորը միասին այդիների միջով փախչել դէպի Շբխմամուտ։ Այստեղ մի փոքրիկ զօրք էր կանգնած մի օֆիցերի հետ։ Եարմջեցիք ինդրեցին սրանցից մի քանի զինուոր, որպէսզի նրանց հետ գնային վանելու թիւրքերին գիւղից։ Սպան մերժեց այդ, առարկելով, որ ինքը իրաւունք չունի, այլ պէտք է դիմել գնեռալ Ալիխանովին։ Այն ժամանակ Եարմջեցի տղայքը վերցրին 5 հոգի Շբխմամուդցի, 5 հոգի կուլբէկիդիզայի և 10 հոգի էլ իրենք, բոլորը հրացաններով զինուած, դիմեցին դէպի Եարմջա, որտեղ թիւրքերը զբաղուած էին տներն ու գոյքը թալանելով։ Թիւրքերը կարողացել էին միայն մի տուն այրել երբ տղերքը վրայ հասան. բայց և այնպէս ամեն ինչ արդէն սրբել էին։ Երևկոյեան դէմ հասան նաև կօզանցիները, որոնց գնուեցին մեր տղերքը դուրս քշեցին թիւրքերին գիւղից։ Թալանած են իպատ 54 տուն և եկեղեցին. այստեղից յափշտակել էին Մեսրովբ Արքեպ. Սմբատեանից „Հայապատրիարքիչ" մատեանները, որոնք յետոյ Շէյխ-ուլ իսլամի ջանքերով գտնուեցին և յանձնուեցին Կարապետ վարդապետին։

Սպանուած է 1 հոգի. վիրաւորուած՝ 2 հոգի.

2 Թ մ բ ա ս ի մէջ խառն ազգաբնակութիւն է, որից 132 տուն հայ է, 37 տուն թիւրք։

Նախիջևանի կառաւարչից յետոյ տեղացի թիւրքերը սկսեցին իրենց ընտանիքներն ու գոյքը ուղարկել մատակայ գիւղերը։ Միևնոյն ժամանակ նրանք հայերին համոզում էին, ընդհակառակը, մնալ ու միասիտ լինել, որովհետև, եթէ նոյնիսկ ուրիշ տեղերում հայերի կառաւարչի տեղի ունենայ, իրենք չեն թոյլ տայ Թմբուլում։

Մայիսի 15-ին, առաւ տեսան հայերը լսեցին յանկարծակի հրացանի ճայթիւն խանի աշտարակից, որը եղաւ ազդանշան ընդհանուր հրացանաձգութեան համար։ Թիւրքերը Գիսեցին բոլոր կողմերից կրակել և յարձակումներ գործել հայ տների վրայ։ Հայերը փախան այս ու այն կողմը, կենդրոնացան մի քանի մեծ տներում, որոնք իբրև դիրքեր էին ծառայում պաշտպանութեան համար։ Հայերն էլ սկսեցին կրակել թիւրքերի վրայ։ Հրացանները պիտանի էին և լցնում էին վառոդով։ Թիւրքերից շատերը ձեռքերին բռնած ունէին ցախաւելներ, նաւթի մէջ թաթախած. նրանք վառում էին այդ ցախաւելները և գցում տների տակ, որպէսզի հրդեհեն հայերի տները։ Այդ հրացանաձգութեան միջոցին մոլլան բարձրաձայն Ղուրան էր կարդում, իսկ խուժանն աղաղակում էր „եա՞ Ալի, ջարդեցէք անհաւատներին"։ Այս բոլորը հողերը մեզ պէտք է պատկանեն, դա ռուսական չէ, այլ մերը, պարսկական"... Թիւրքերը շատ լաւ յարմար դիրքեր գրաւած ունէին, իսկ հայերը կանգնած էին ցածր դիրքերի վրայ, ուստի թիւրքերի համար շատ դիւրին էր կրակել հայերի վրայ։ Թիւրքերը զինուած էին բերդանի ու մաղազինի հրացաններով։ Հրացանաձգութիւնը շարունակուեց մօտաւորապէս 6 և կէս ժ. ու դադարեց միայն այն ժամանակ, երբ Նախիջևանից օգնութեան եկան ռուս զինուորներ։ Թալանուած են 42 տուն, այրուած 37. հրդեհաշէջներից մի քանիսը ջուր չունենալով, կրակը հանգցնում էին կարասից վերցրած գինով։

Սպանուած են 20 հոգի, վիրաւորուած 9 հոգի։

Այժմ դառնանք այն գիւղերին, որոնք թէև ենթարկուել են յարձակումների, բայց դեռ են մնել և համեմատաբար քիչ պատաներ են կրել։

3. Շ բ խ մ ա ս ա ա —հայաբնակ, բաղկացած 124 տնից։ Թիւրքերը յարձակուել են մայիսի 10-ին հօտի ու տաւարի վրայ ու քշել տարել են։ Հայերը դիմադրել են ու կարողացել են թալանած տաւարի մի մասը միայն դեռ խլել։ Բոլոր շրջակայ գիւղերի մէջ Շբխմամուտն էր, որ իւր հայ բնակիչներով ա՛յ միայն կարողացաւ դիմադրել և թոյլ չտալ, որ թիւրքերը իրենց վրայ յարձակուեն, այլ և դարձաւ մի կենտրոն, որտեղ շրջակայ հայ ապաստակած գիւղերի ժողովուրդը ապաստան էր գտնում։ Շբխմամուտի հայ տղայ.քը նոյնիսկ երբեմն գնում էին ուրիշ հարևան գիւղերին օգնութիւն հասցնելու թիւրքերի դէմ կռուելով, ինչպէս՝ օրինակ՝ Մամարգա գիւղայի, Մազրայի հայերին։

Շբխմամուտում հաւաքուել էին հեռուներ հայ գիւղերից փախստականներ.—Վերին Ուզուն 0 տից—250 հոգի, Գիդուվարից—48, Նազարաբեթցի—500, Ջահնուկից (Ջահրից) — 930, Խալխալից - 450, Մազրայից — 360, Մամարգա-Գիզայի — 6՝ հոգի. այսքան մարդ կային յիշեալ գիւղում յունիսի սկզբներին։ Բայց մինչև յունիսի սկիզբները հաւաքուած են եղել և արդէն վերադարձան կրկին իրենց գիւղերը, հայեր Եարմջայից, Գիւլի-բէկ-դիզայից, Քեարիմ-բէկ-դիզայից։ Մինչև որ էլ տակաւին շատերը չեն ցրուել և շարունակում են մնալ Շբխմամուտում։

Ձեզ յայտնի է, որ Նախիջևանի կառաւարչից յետոյ երկու ազգութիւնների տեղական հոգևոր պետերը, ընկերակցութեամբ մի քանի պատուաւոր աշխարհական անձերի, շրջակայում էին դառնալ, երկու ժողովուրդներին խաղաղացնելու, բարեբաստ կրքերը հանգստացնելու համար։ Հայերի կողմից Երևանի թեմական առաջնորդ Կարապետ վարդապետն էր իսկ թիւրքերի կողմից Շէյխիւլ-իսլամը և Նախիջևանի Բահիմ խանը, յայտնի պեկավարը ներկայ թիւրք-հայկական ընդհարման։ Երբ յիշեալ անձինք եկել էին Շբխմամուտ, ուր այնքան հայեր էին ժողովուած և ուր նրանք զէնքը ձեռին դիմադրում էին և մի քանի անգամ էլ թիւրք խուժանին լաւ դասեր էին տուել, ահա այդ անձերը սկսեցին քարոզել խաղաղութիւն և այլ այսպիսի դեղեցիկ բաներ։ Շատ բնորոշ էին Շէյխիւլ-իսլամի և Բահիմ խանի խօսքերը, որոնցով նրանք դիմում էին հայերին։ Այդ խօսքերը մեզ պարզ ցոյց են տալիս, թէ ինչ վատնգաւոր ու փարիսեցիութեամբ ապրուած հարևանների հետ մենք գործ ունենք այսօր։

Շէյխ-իլ իսլամը խօսում էր խաղաղութեան, հանգիստութեան մասին, երկու հարևան ժողովուրդների միաբանութեան անհրաժեշտութեան մասին. „եղբայրներ, առում էր նա, Աստուած երբեմն մարդկանց վրայ ուղարկում է զանազան պատուհասներ՝ կարկուտ կամ մարեխ, կամ խ լերա, կամ ժանտախտ և այլ ամեն տեսակ շար պատիժներ. այս կատաղածը ձեր մէջ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի տեսակ հիւանդութիւն, որը դուք համբերութեամբ պէտք է տանէք. չէ՞ որ ձեր Աստուածաշունչի մէջ ասած է, եթէ զարկեն քեզ մի ապտակ, երեսիդ միւս կողմն էլ դէմ արա թշնամուդ։ Այստեղ, այս մեր դժգոհութիւնների մէջ Շէյթանն է մեզ տարել, անիծեցէք բոլորդ նրան՝... Ամենքը անիծում են Շէյթանին։ Շէյխիւլ- իսլամն էլ շատ լաւ գիտէ, որ այդ անէծքներից Շէյթանը չի փախենայ և միշտ էլ կը պահպանէ իւր գոյութիւնը, այստեղ ու այնտեղ անդադար կռիւներ առաջ բերելով հայերի և թիւրքերի միջև...

Այնուհետև խօսում է Բահիմ խանը՝ Նախիջևանի քաղաքագլխի եղբայրը։ „Հայ եղբայրնե՛ր, դուք գիտէք, որ քանի դար է մենք ձեզ հետ ապրում էինք իբրև լաւ հարևաններ. այդպէ՞ս է թէ ո՞չ։ Դուք գիտէք, որ յընթացս այդ դարերի ոչ մենք ենք ձեզ տուել ձեր մաղին և ոչ էլ դուք մերին։ այսպէ՞ս է թէ ո՞չ. ապա թէ մեկդ համարձակուի ո՛չ ասելու։ Ես խաղաղասէր մարդ եմ. ձեր ապրանքն ու գոյքը թալանած է թիւրքերի ձեռքով, բայց ես ձեզ խոստանում եմ յետ դարձնել բոլորը մինչև վերջին տալը, երբ կը գայ այս կողմերը նշանակած գեներալ Ալիխանով, որ իմ փեսան է։ Իմ խաղաղասէր մարդ լինելը կապացուցանեմ ձեզ հետևեալ փաստերով. մայիսի 13-ին 5՝10 հոգի քիւրդեր անցան Աբաքսը, յարձակեցին Կարախանբեկլիի գիւղացիներից տաւարը. ես, իմանալով այդ, իսկոյն և 18 հոգի տեղը և բար-

ձրայնելով միայն իմ ցուցամատը, թափահարեցի նրանց վրայ և հրամայեցի իսկոյն հեռանալ։ Թիւրքերը իսկոյն հնազանդուեցին ինձ և խոնարհուելով անցան միւս ափը“։ Այդ ինչպէ՞ս է բաշիմ խանը կարողանում է միանգամայն օտար, միւս ափից եկած քիւրդերին մի մատի թափահարումով հեռացնել, իսկ իրեն հպատակ Նախիջևանի թիւրքերի վրայ ոչ ոք մի մատ չի բարձրացնում…

4. Բ ա գ ա մ լ ո ւ։ Մայիսի 14-ին թիւրքերը շրջապատեցին գիւղը չորս կողմից։ Հայերն ունէին 4 բերդանի հրացաններ, տարճանակներ, բայց ոչ չգիտէր արձակել։ Թիւրքերն առաջարկեցին իսլամութիւն ընդունել։ Միւս օրն առաւօտեան թիւրքերն եկան աւելի մեծ ամբոխով, կրկին շրջապատեցին և նոյն պահանջները դրին։ Հայերը ճարահատեալ, 2 հայ թիւրքատէր ազդեցիկ ընտանիքների ճնշման տակ՝ տալիս են իրենց յօժարութիւնը և ներս են թողնում թիւրքերին գիւղ։ Ժողովրդի հետ էր քահանան։ Թիւրքերը բերել էին իրենց հետ 2 սափրիչ ու սկսեցին անյապաղ բոլոր հայ գիւղացիներին, նոյն իսկ քահանային սափրել. Թիւրքերը կանգնած էին իւրաքանչիւր հայի մօտ հրացանը ձեռքին և սպառնում էին հակառակողներին տեղն ու տեղը սպանել։ Բոլորին սափրեցին, իսկ երեխաներին թլպատեցին։ Հայ կանանց հրամայեցին հանել „չեկատանը“ ու „չադր“ գցել վրաները։ Կատարեցին մի քանի „քեբին“. Եկեղեցին մզկիթի փոխեցին։

Մայիսի 27-ին այս գիւղն եկան գեներալ Ալիխանովը, Երևանի փոխ-նահանգապետը և Կարապետ վարդապետը։ Այնտեղ գիւղացիք յայտարարեցին, որ իրենց բռնի են իսլամացրել, ուստի բոլորեքեան, բացի վերյիշեալ երկու թրքատէր ընտանիքներից, կրկին դարձան քրիստոնէութեան։

Թիւրքերը վրէժ հանելու համար յարձակումներ գործեցին նաև մայիսի 30—31 և յունիսի 1-ին։ Միշտ յետ էին մղւում գիւղի մէջ պահակ դրւած ռուս զինուորներից։ Թալանեցին տաւարը։

Թալանուած ապրանքի վնասն է մօտ 3,630 րուբլի։

ՑԱՐԻԶՄԻ ՈԺԻՐՆԵՐԸ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ)

Ստավրօպօլ, 10 յունիսի

Ռուսական բռնապետութիւնը իր ցանած սերմերի պտուղները սկսել է վայելել։ Սակայն այդ պտուղները նրա քիմքը չեն քաղցրացնում, և այդ պատճառով այժմ նա այլևայլ միջոցների է դիմում՝ դրանց դառնութիւնից ազատուելու համար։

Անդրկովկասեան թիւրքերին իր ձեռքում գործիք դարձնելու նպատակով և վստահ, որ այդ տարրը հաւատարիմ հպատակ է բռնութեան գահին, ցարի կովկասեան սպասաւորները ոչ մի միջոց չխնայեցին նրանց հայերի դէմ լարելու. կառավարութիւնը իր ձեռքով զինեց մահմէտականներին։ Կովկասեան կարճատես, բթամիտ կառավարիչները չկարողացան նկատել, որ Ռուսաստանի հմայքը արևելքում՝ ներկայ պատերազմի պատճառով՝ այնքան ընկել է, որ թիւրք ժողովուրդն էլ է սկսել նրան արհամարհել և խաւար թիւրք ամբոխի ուղեղի մէջ փորձում են յարութիւն առնել մտքեր՝ կովկասեան թրքաբնակ նահանգների վրայ կրկին ծածանեցնելու մահմէտական բռնապետութեան դրօշը։ Կրօնական մոլեռանդութիւնը և թրքական սխալ հասկացած հայրենասիրութիւնը սրանից աւելի բան չէր կարող ստեղծել։ Խուժանի արիւնածարաւ բնազդը զարթել է, աւարառութեան տենչը թևեր է ստացել կոյր կառավարութեան աջակցութիւնից։ Դրանից շատ ճարպիկ կերպով օգտուեցին համիսլամութեան գործակալները և զանազան մութ գործիչներ։ Եւ իբրև հետևանք դրանց պրոպագանդի՝ այժմ շարժումը մահմէտական ցեղերի ապստամբութեան կերպարանք է ստանում։ Կառավարութիւնը այժմ միայն նկատում է, որ վտանգաւոր խաղ է սկսել, որ կայծը կարող է հրդեհ դառնալ, և ահա թէ ինչո՛ւ ռուսաց զօրքերը այժմ մահմէտական խմբերի դէմ են դուրս գալիս։ Ցարի գործակալները այժմ հանգցնել են ուզում այն հրդեհը, որ իրենք բորբոքեցին։

Նոյնանման մի բան կատարուեց յունիսի 7-ին հիւսիսային Կովկասի Ստաւրօպօլ քաղաքում։ Այդ քաղաքը թեմական եպիսկոպոսի աթոռանիստ է և նրա առանձնայատկութիւնը այն է, որ փողոցները վխտում են քահանաներով։ Կղերը տիրում է ժողովրդի մտքին ու սրտին։ Այդ կողմից Ստաւրօպօլը երևի առաջնակարգ շքանշաններից մէկին է արժանի։ Դրա ապացոյցն է հետևեալ փաստը։ Չնայած ներկայ տագնապալի ժամանակներին, չնայած նրան, որ ամենուրեք մարդիկ զբաղուած են այն հարցով, թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնեն, որպէս զի շուտով հրաւիրուի Հիմնադիր ժողովը, երկիրը ազատուի բռնակալութիւնից և արիւնահեղ պատերազմին վերջ տրուի, չնայած այս բոլորին, ասում ենք, ռուս հոգևորականութիւնը այստեղ զբաղուած է հրէշաւոր գործով.— Ստաւրօպօլի մի եկեղեցում կրօնական հրապարակային վիճաբանութիւն էր կազմուել՝ հնադաւանների (ստարօվէր) հետ։ Վիճաբանութեան ընթացքում, փոխադարձ քննադատութիւնների ժամանակ, մի հնադաւան ի միջի այլոց ասում է. „Դուք կուռքերին էք երկրպագում“. այդ խօսքը շուտով շուռ են տալիս և տարածում, թէ հնադաւանը ասաց՝ „Դուք սատանաներին էք երկրպագում“։ Եւ ահա սկսուեց ամբոխի յուզմունքը. նա ուզեց իր ձեռքով դատաստան տեսնել հնադաւանների գլխին։ Վրայ հասաւ ոստիկանութիւնը, որը հազիւ ազատեց դժբախտներին, ամբոխին եկեղեցուց դուրս արեց, ներսում, միայն հնադաւաններին պահելով, ամբոխի գազանութիւնից ազատ պահելու համար։ Քանի դեռ ամբոխը քիչ էր, ոստիկանութիւնը եռանդուն միջոցներ ձեռք չ՚առաւ նրան ցրուելու. իսկ երբ նա հասաւ հազարների՝ ստիպուեցին զօրք կանչել։ Զօրքը սովորական նախազգուշութիւնները արեց, բայց ամբոխը չցրուեց։ Եւ ահա կատարուեց մինը այն հարիւրաւոր դէպքերից, որոնց նմանը շատ է տեսել Ռուսաստանը, բայց էլի խելքի չի գալիս։ Հարիւրաւոր սպանուածներ և վիրաւորներ։ Կատաղած ամբոխը չգիտէ, թէ ո՞ւմ վրայ թափէ իր թոյնը — նա մէկ վազում է դէպի ոստիկանապետի տունը, մէկ՝ դէպի նահանգապետի տունը, նրանց համարելով յանցաւոր, բայց նրանց դռները պահպանում են զինուորներ։ Իսկ միւս կողմից բժիշկների դռները, հիւանդանոցները, դեղատները լցուեցին վիրաւորուածներով։ Թափուած դիակներին մօտենալ չի լինում. Զինուորները թոյլ չեն տալիս։ Ամբոխը հայհոյում է զօրքերին և ոստիկանութեան, մռնչալով՝ այս ու այն կողմն է վազում, բայց ձեռքին հնար չ՚ունի։ Ողորմելի, խաւար մասսա, որ եռանդ ունի, ցաւող սիրտ ունի, բայց բթացած ուղեղ և կոյր աչքեր ու չգիտէ ո՞ւր է իսկական յանցաւորը, ո՞ւր դիմել, ո՞ւմ պատժել. իր կարծիքով նա լաւ գործ է կատարում, որովհետև ուզում է հնադաւաններին, ուղղափառ եկեղեցին անպատուողներին պատժել. չէ՞ որ նրան շարունակ այդպէս են քարոզել, իսկ միւս կողմից նա ապշած է՝ ինչու են հրացաններ արձակում իր վրայ։

Ոճրագո՛րծ կառավարութիւն. նա բթացրեց, անասնական վիճակի հասցրեց ամբոխին՝ իր տուած հրահանգները կատարելու համար..

ՄԻ ԹՌՈՒՑԻԿ

Հ. Յ. Դաշնակցութեան Օդեսայի Կոմիտէն հրատարակել է, հայերէն և ռուսերէն լեզուներով, մի թռուցիկ, ուր ի միջի այլոց կարդում ենք.

„Զգալով իր մօտալուտ վախճանը և անկարող լինելով խուսափել ժողովրդական դատից միմիայն կնուտի, սուինների ու բանտերի օգնութեամբ՝ ցարիզմը կազմակերպում է երկրի խաւար տարրերը, իր ձեռքում գործիք դարձնելու համար։ Լ.ե ահա անօրինականութեան և ճորտութեան մթնոլորտում սնուցած՝ այդ անգիտակից, խաւար ուժերը օգնութեան են վազում մեռնող ռէժիմին։ Վառուած կոյր, մոլեռանդ ատելութեամբ դէպի բոլոր գաղափարական կուռողները՝ „մա՜հ ինտելիգենցիային“, „մա՜հ հրէաներին, մա՜հ հայերին“ աղաղակելով—որպէս Կիշինևի մարդասպանները, Կուրսկի խուլիգանները և Բագուի թիւրքերը—նրանք շտապում են դէպի արիւնալի հանդէսը, դէպի անսանձ կրքերի վայրենի օրգիան... Լ.ե նրանց առաջից, հարթելով նրանց համար մարդասպանութեան ու կողոպուտի ճանապարհը, գնում են նրանց ղեկավար արքայական մանկլաւիկները... Դրանցից էր Բագուի մարդասպան-նահանգապետ Ղակաշինէն, որ արժանացաւ յեղափոխականի վրէժխնդիր հարուածին“...

ԹԵՐԹՕՆ

ՕՏԱՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻ ՏԱԿ

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ՔՐԻՍՏԱՓՕՐԻՆ

Եւ կարաւանը կանգ առաւ յոգնած...

Օտար ու հեռաւոր հորիզոնների տակ մի գերեզման կայ, մի մռայլ ու անպարզ գերեզման, որ հայրական խնամքով ու քնքշութեամբ սղմում է իր կողքին մի ուրիշը՝ մի նոյնպէս անպարզ, նոյնպէս մռայլ գերեզման. և նրանց վրայ ուշ գիշերներին պլպլան աստղերը սիրում են երազել աշխարհի իրերը, մեղմ փսփսուկով իրար են յայտնում մի խորին գաղտնիք, ապա թախծապատ ու դալուկ դէմքով սահում, անցնում են դէպի արևմուտք։ Բուսաւեր ու այրի թռչունը մոլար, անիծելով իր թողած վայրերը, հասնում է այնտեղ, պտոյտ է անում լռիկ դամբարանի վրայ, մի յետին ցաւոտ երգ է հեծեծում և անցնում է գնում տանելով իր հետ էլի մի նոր վիշտ, աւելի խորունկ, աւելի կիզիչ։ Լ.ե մի դժբախտ երկրից բոլոր լալկան հովերն այստեղ են փչում միահամուռ սոյլով, երբ բեռնաւորուած են ցաւ ու արցունքով, երբ բօթեր ունին կամ խոր հառաչանք, երբ զայրոյթ ունին կամ ծով հեծեծանք, երբ տրտունջ ունին կամ անզուսպ բողոք։

Կարաւանը յոգնած՝ այնտեղ կանգ առաւ։

Նրանք եկել էին հովերի յետևից քայլ առ քայլ դանդաղ ու յոգնած. եկել էին փոշոտ, անվերջ ու մոլոր ճանապարհներով, կռացած իրանց տառապանքի բեռի տակ, առանց տնքոցի, առանց տրտունջի, առանց ափսոսանքի, որպէս ուխտաւորներ, որպէս փրկութեան համար նոխազներ։ Եւ քայլել էին գիշեր ու ցերեկ, տրորուած կրունկներով, աչքերը դէպի հեռո՜ւն միշտ հեռո՜ւն, դէպի այն օտար հորիզոնները, ուր մի օր իր կորիւնի հետ պառկեց հսկայի քնով, այլ ևս երբէք չը վերկենալու համար, ուր հզօր գլուխը յոգնած ու տառապալից, մի օր, մի անէծքի օր, կախուեց լայն կրծքին, այլ ևս երբէք վեր չը բարձրանալու համար։

Հովերի պէս բեռնաւորուած, հովերի պէս անհանգիստ ու սգաւոր, նրանք գալիս էին այն սեւաւոր երկրից, ուր ժպիտը յանցանք է, ու արցունքը՝ ծով, ուր կեանքը՝ անէծք է, և մահը փրկիչ, ուր հառաչանքից երկինքն է այլուսած, և հողը տնքում է ցաւերի բեռից։ Եւ հովերի հետ անցել էին ծովեր ու գետեր, սար տակ տուել լեռներ ու ձորեր, բոլոքը՝ շրթներին, կսկիծը՝ սրտերին, անցել էին ու եկել դէպի մենաւոր գերեզմանը։ Լ.կա՜ն, եկան ու շարան-շարան կանգ առան այնտեղ, ուր հովերը մրրկւում էին, գալարուած, տնուում։

Լ.ե կանգ առաւ ծերունին, ճերմակ միրուքն ու ալիքները հովերին դէմ տուած, և իր լայն կրծքից հառաչանք հանեց, գետին զարկեց մաշուած գաւազանը, և հողը դրնդաց նրա հարուածից։ Նրա հետ մեկտեղ կանգ առան բոլոր նրանք՝ որոնք եկել էին լեռներից ու ձորերից, այրերից ու մութ անտառներից, դաշտերից ու աւերակներից, բոլոր նրանք՝ որոնք եկել էին իրենց կրծքի տակ կուտուած ցաւը թափելու, իրենց հոգին աղմկող մեծ բանն ասելու, սրտի ահագին բեռը վար դնելու։ այրիների, որբերի, ծերերի, տառապողների վշտոտ կարաւանը կանգ առաւ։

„Դու այստեղ ես քնած, քո կորիւնի հետ, ով մարգարէ, նահատակ, առաքեալ, ասաց ծերունին, այստեղ՝ օտար հորիզոնների, օտար երկնքի տակ։ Մենք երկաթ ոտնաման հագած, երկաթ գաւազան ձեռք առած, հովերի հետ մէկ տեղ քեզ փնտրել ենք երկրէ երկիր, սարից սար, ձորից ձոր։ Մենք եկել ենք բոլոր նրանց կողմից, որոնք լալ են ուզում, բայց արցունք չ'ունին, հառաչանք ունին, բայց կրծքերն է փլած, սև կսկիծ ունին, առանց սփոփանքի, գանգատներ ունին, որոնց սիրտ չի դիմանայ, և աչքերին անթարթ նայում են հեռուն, հատուցման, ու վրէժի սասանեցնող ու ահաւոր օրին են սպասում։ Գալիս ենք բոլոր նրանց կողմից, որոնց հոգին մեռաղի պէս կարծրացել է արհաւիրքի ու տանջանքի մէջ, բայց էլ տոկալու, լռելու, համբերելու կարողութիւն չ'ունին, և երազում են հատուցման հըրաշալի օրը։ Լ.ե դու քնած ես, զարհուրելի է...

„Արդար վրէժի կարմիր ժամը դարձնող դու հսկայ վարպետ, ինչ եղաւ քեզ. երկնքին էր անողորմ, որ շուտ գրկեց քեզ, թէ՞ երկինքը, որ փակեց աչքերդ. հապար ու հապար մթագնած աչքեր օր ու գիշեր նայում էին հեռուն, դէպի սև հորիզոնը, սպասելով ատելութեամբ ու վրէժով լանգուած հսկայական փոթորկին, որ քո ձեռքով շղթայազերծ՝ վերջապէս պիտի պոռթկար մեր սեւաւոր երկրի վրայ, սրբելու համար բոլոր արցունքները, բոլոր անիրաւութիւնները, բոլոր գարշանքը, ամոթելու բոլոր այլուսած սրտերը, փշրելու բոլոր ժանգոտ շղթաները։ Լ.ե դու քնա՞ծ ես... զարհուրելի է...

„Օ՜, այդ հատուցման սքանչելի օրը... ինչո՞ւ ուշացաւ. նրա համար մեր մեռելները թանձր հողի տակ հեւում էին անհամբերութիւնից, մեր լեռներն ու ձորերը մնջել էին ահաւոր գաղանիքին իրաղեկ՝ մահամերձ հիւանդները անվերջ հոգեվարքով, օրերով պայ-

քարում էին մահուան դէմ, որ մեռնելուց առաջ այն գոռ փոթորկի կայծակի փայլը մի յետին անգամ շողշողայ նրանց աչքերում և մարդակերը ճիւաղի վերջին զզուելի հառաչանքը նրանց ականջների մէջ մարի։ Եւ մանուկներն օրօրոցի մէջ և ծերերը գերեզմանի հողաթմբի վրայ իրենց գաւազանին յենած՝ նայում էին այն կողմը, որտեղից պիտի ծագէր փոթորկածին արշալոյսն ահագին։ Եւ դու քնած ես... խորունկ, անդորր քնով։

„Ի՞նչ եղաւ քեզ, ո՞վ դու սրտերի և կամքերի հրաշալի հովիւ, արիւնոտ մրրիկների հզօր ու ըմբոստ վարիչ, ո՞վ տուեց քեզ այդ ճակատագրական քունը, այդքան խորը և այսպէս երկար։ Չը գիտե՞ս արդեօք, որ հազար ու հազար հոգիների մէջ հաւատն է լալիս այրի ու սգաւոր, հազար ու հազար սրտերի մէջ ծլած յոյսը կենսատու շողերին կարօտ՝ մեղմիւ հեծեծում է սև խաւարում. փոթորիկն եկաւ՝ սև ամպերը չը ցրեց, կայծակը շանթեց՝ ու խոտոր անցաւ։ Եւ դու քնեցիր, երբ այնքան հոգիներ երազում էին քո մեծ և ահաւոր ու սքանչելի երազը...

„Չէ՞ մեր լեռներում հրէշը մնաց կանգուն ու սպառնալի. հազար գլխանի արիւնարբու հրէշը, որ մեր հոգիներն է քաղում, մեր արիւնը ծծում, մեր սիրտը քամում մենք եփւում, մրկւում ենք նրա բոց շնչի տակ։ Տե՛ս, քեզ բերել եմ ես նմուշները սարսափի, ցաւի, կսկիծի, լացի. սրանք ամենքը ասելիք ունին, սրանք ամենքը գանգատ են եկել, զարթի՛ր ու ասա, մեր ծով ցաւերի վախճանն ո՞ւր է, ասա՝ ո՞վ է անիծել մեզ և ինչո՞ւ։ Նայի՛ր մեզ վրայ գէթ մի անգամ, ո՞վ մեծ, ո՞վ ըմբոստ հոգի, և երբ նայես, գիտես, քո հսկայ սիրտը էլ տոկալ չի կարող էլ քնել չի կարող և դու վեր կը ցցիս քո բոլոր վեհութեամբ, այն բաց ու հպարտ ճակատով, որ բոլոր դժբաղդներն ու պայքարողներ երազեցին, այն հրաշագեղ աչքերովդ, որոնց տակ նէիրական ու փրկարար կայծակն էր մխում, այն սքանչելի նայուածքովդ, որից հաւատն էր կաթկթում բալկամի պէս՝ աւեր ու վշտոտ հոգիների վրայ, այն լայն կրծքովդ, որ հզօր կաղնու պէս փոթորիկների տակ երբէք չը տնքաց և որի վրայ բաղդի բոլոր խորթ զաւակները գլուխ դընելու տեղ ունէին։

„Զարթի՛ր ու վերկաց. ո՞ր անսիրտ հողը կարող է կաշկանդել քեզ իր խոնաւ ծոցում, երբ մենք տառապում ենք անլուր ցաւերով, երբ մեր հեծեծանքն ու աղաղակն անսիրտ երկնքի երեսն են մրկում. չէ՞ դու մեզ համար, միայն մեզ համար ծնար, ապրեցիր, մեզ համար տարար պայքար, տանջանք և մեր փրկութեան օրը երազեցիր. չէ՞ քո պայծառ ճակատը մեզ համար կնճռեց և քո աչքերը մեզ համար լացին։ Ո՞ւր է այնքան լայնարձակ շերիմ, որ քո զայրոյթն ու կսկիծը պարտկել կարողանայ, երբ քո երազներից ամենից վսեմը, ամենից ըմբոստն ու ահաւորը դեռ երազ մնաց. այն՝ որ կայծակների մէջ էր փթթել փոթորկոտ գիշերներին և քո մեծ հոգին յուզում էր, աղմկում միայնութեանդ թախծոտ ժամերին, այն՝ որի համար մենք օր ու գիշեր ծընկաչոք օրհնում էինք քո ուղին, մեր շընթունքները կրծոտում, մեր միսը քրքրում ու արիւնոտում, որ համր կտրենք ժայռերի պէս, ձայն չը հանենք, չը փսփսանք, իրար չը նայենք, հայեացքներս կախենք, լռենք, լռենք ու հաւքերենք, մինչև պայթի քո հզօր ձայնը, մինչև կատարւի քո կարմիր ուխտը, մեր բոլորի ուխտը, մինչև փայլատակի կարմիր արշալոյսը մեր յոգնած և մարած բիբերի վրայ։

Եւ այն երազը դեռ երազ մնաց, իսկ դու քնած ես... ո՞ր չար ասուածը թափեց քեզ վրայ այս խորունկ քունը։

„Դէ՜հ, շարժւիր ու վերկաց, ցնցիր ու թափ տուր այդ հողակոյտը, կանգնիր մրրկոտ հովերի առաջ, որոնք մռնչում են մեր աշխարհի գլխին։ Մի կոյր դիպուածն ինչպէ՞ս կարող է այդքան հոյակապ կեանքը սպառել, այդքան մեծ հոգու նէիրական հրդեհի բոցերը մարել, այդ հզօր մտքիդ թռիչքը սանձել, այլ ևս երբէք չը թողնելու համար։ Շարժւիր ու վեր կաց, այդ մենք ենք ասում, մենք՝ որ գուրգուրեցինք քեզ մեր հոգիների մէջ, մենք՝ որ հազար ու հազար մեռելներ ունինք վրէժի ծարաւ, մենք՝ որ յոգնած ենք գերեզման փորելով, օ՜ զարթի՛ր, զարթի՛ր, զարթի՛ր ու վերկա՜ց...“

Գերեզմանն անշարժ է, հողաթումբը համր և նրա վրայ բուսած խոտերը օրօրում են իրենց գլուխները անյոյս ցաւով, անկարելի, անդառնալի լուռ շեշտով։ Եւ արցունքի կաթիլները ուռած ու խոշոր ցայտում են ծերունու աչքերից, կնճռոտ այտերի վրայից վար գլորւում, իջնում, իջնում, թրջում՝ ալեզարդ միրուքը և կաթիլ կաթիլ շաղւում գերեզմանի վրայ։ Եւ նրա հետ մէկտեղ իր վշտոտ հօտը հեծեծում է ու լալիս և թափւած արցունքից հողաթումբը թրջւում է, բրբբրւում, եռում։

Արցունքը թափւեց և հողը թրջւեց, արցունքի ցաւից՝ շերիմը խօսեց.

„Գիտե՜մ, գիտե՜մ, բոլորը գիտեմ... փոթորիկը պայթեց, սև ամպը մնաց, կայծակը շանթեց ու խոտոր անցաւ։ Ցուէք, տուէք ինձ ձեր բոլոր բեռը, բարդ բարդ արեցէք այս կրծքիս վրայ, և առանց արցունքի ու յուսահատութեան, վերստին յետ դարձէք. այնտեղ, լեռների վրայ թառած արծիւներ կան, որ բոլոր շանթերի գաղտնիքը գիտեն, դէպի լեռնե՛ը, դէպի լեռնե՛ը հայրենի... փոթորիկն այնտեղ է, և նա կը պայթի ահագին որոտով, երկնքի վրայ սև ամպ չի մնայ, կայծակն այնտեղ է, նա կը շանթի ու էլ խոտոր չի անցնի։

Դէպի լեռնե՛ը, դէպի արծիւնե՛ը, իսկ ե՜ս... օ՜ֆ...“

Լուռ գիշերներին ուշացած աստղերը դարձեալ գալիս են երազելու մենաւոր դամբարանի վրայ ու լալիս են անհունութեան մէջ. բուսաւեր, այրի թռչունը մոլար այնտեղ է հեծեծում իր ցաւի երգը, և դժբախտ երկրի հովերն անհանգիստ նրան են պատմում իրենց տեսածները։

Եւ գերեզմանը լուռ երազում է աստղերի, ամպերի և հովերի հետ իր մեծ, իր սքանչելի երազը...

Եւ հեռո՜ւ, հեռո՜ւ լեռներում թուխ ամպերը բարդ բարդ դիզւում են, հա դիզւում. ճայթի՛ր, ճայթի՛ր փոթորիկ...

ՂԱՐԻԲ

ՄԱՄՈՒԼԸ Կ. ՊՕԼՍԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Die Zeit գրում է „Հիւանդ մարդը“ խորագրով յօդուածի մէջ.

Մեծ „հիւանդ մարդու“ հանդէպ՝ գրեթէ մոռացել էին

փոքրիկին։ Հարկաւոր էր ուժանակային մի պայթիւն, որպէսզի մենք նորից յիշէինք նրա գոյութեան մասին։ Կ. Պոլսում սպանութեան փորձ արեց սուլթանի դէմ և դա նոյնքան քիչ է զարմացնում մեզ, որքան քիչ կը զարմացնէր, եթէ յեղափոխականի ձեռքը ուղղէր ցարի կեանքի դէմ։ Այն ժամանակից, երբ գտնւել է ուժանակը և երբ քաղաքակիրթ մարդը չէ կարող ապրել առանց բնական ազատութիւնների, ինչպէս առանց լոյսի և օդի,—այն ժամանակից ի վեր բռնապետութեան երկու միայնակ ներկայացուցիչները տրամաբանօրէն ամենից աւելի յաճախ ենթակայ են այդպիսի պատահարների։ Ինչպէս որ Նիկոլա Բ. Պետերհօֆի դղեակի մէջ սոսկում է իր սեփական ստուերից, նոյնպէս և Աբդիւլ Համիդը դողում է ամեն մի բարձր ոտնաձայնից, իր պալատում։ Կերակուրները դուր չեն գալիս—նա նրանց կարծում է թունաւորւած. իր բարեկամներին չէ վստահում,—նա նրանց կարծում է կաշառւած... Արիւնը որ նա հոսեցրել է, սպառնում է խեղդել նրան և անգամ Բոսֆորից փչող երեկւան անուշ քամին պատմում է նրան բռնաբարութեան և սպանութիւնների մասին... Հաւանական է, որ ատենտատից յետոյ զգուշութեան միջոցները Ելդըզ Քեօսկում աւելի ևս պիտի ուժեղացւին. Հնարաւոր է, որ սուլթանը, գլխաւոր նպատակ ունենալով իր սեփական կեանքի պահպանումը, աջողէ երկրորդ անգամը խոյս տալ ատենտատից, սակայն ստոյգ է, որ յեղափոխական շարժումը Տաճկաստանում չէ դադարեցւել... Սուլթանը անկարող է արգելել իրերի ընթացքը, ազատագրութեան մօտեցող շունչը։

—

Մարսէլի *Le Semaphore* թերթի իրազեկ թղթակիցը ի միջի այլոց հետեւեալն է գրում Կ. Պոլսից.

Կասկածները կարող են ընկնել երեք տարրերի վրայ,—թիւրք բարենորոգիչների, հայկական կոմիտէների և մակեդոնական ներքին կոմիտէի վրայ։ Հայերը և բուլգարները փորձւած մարդիկ են ռումբերի գործածութեան մէջ. հայերը ապացուցել են այդ 1896 թւին, երբ նրանք օր ցերեկով գրաւեցին Բանկ Օտտոմանը, որ նրանք օդը պիտի ցնդեցնէին, եթէ անսպասելի կերպով չը նահատակւէր իրենց պարագլուխը։ Ինչ վերաբերւում է երիտասարդ թիւրքերին, նրանք անընդունակ են թւում ըմբռնելու և գործադրելու մի փորձ՝ ռումբի կամ դժոխային մեքենայի միջոցով։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Frankfurter Zeitung-ին գրում են Զմիւռնիայից, 16 օգոստոսի.

Ոստիկանութիւնը բաց արաւ հայկական մի դաւադրութիւն, որը եթէ աջողէր իրագործւել, մի քանի հազար մարդկային զոհեր պիտի պատճառէր։ Ամբողջ քաղաքը յուզման մէջ է։ Գտնւած են 140 ռումբեր և դժոխային մեքենաներ, մեծ քանակութեամբ թոյն և մանրամասն նախագծներ, որոնցից երեւում է, որ սեպտեմբերի 1-ին զարհուրելի ծրագիրը պիտի իրագործւէր։ Քաղաքի ջուրը պիտի թունաւորւէր, գազի աղբիւրը պիտի պայթէր և այդ մթութեան մէջ բոլոր հիւպատոսարանները, բանկերը, եկեղեցիները, հասարակական հիմնարկութիւնները օդը պիտի ցնդէին։

—

Կ. Պոլիս, կիրակի.

Ձերբակալւած հայերից մօտ 20 հոգի կը բերւեն բարձր քննիչ ատեանի առջեւ։ Այդ քննութիւնը պէտք է հաստատի՝ կա՞յ արդեօք ոեւէ կապ սուլթանի դէմ եղած սպանութեան փորձի և Զմիւռնիայի դաւադրութեան միջեւ։ Հասարակութեան բոլոր դասակարգերը զբաղւած են Զմիւռնիայում արւած գիւտով։ Կարծում են, որ ուժանակային ռումբեր են թագցրւած ուրիշ քաղաքներում ևս, նոյնպէս Կ. Պոլսում։ Ըլդըզի իշխանութիւնները այն աստիճան մտատանջ են այդ շշուկների և Զմիւռնիոյ դաւադրութեան պատճառով, որ չեն կարող զբաղւել պետական գործերով, որոնք երկար ժամանակից ի վեր առկախ են մնացել։

Reuter

—

Die Zeit-ին գրում են Կ. Պոլսից, 20 օգոստոսի.

Զմիւռնիայում բացւած հայկական դաւադրութիւնը յուզմունք է յարուցանում ոչ միայն Ըլդըզում, այլ և դիւանագիտական շրջաններում, որովհետև նա մի նշան է, որ Ըլդըզի սպանութեան փորձը մէկ մասն է միայն եղել լայն ճիւղաւորւած մի դաւադրութեան։

Սեպտեմբերի 1-ի համար ընդարձակ և խիստ միջոցներ են ձեռք առնւում։ Լուր կայ, թէ Ըլդըզը պէտք է իսպառ կղզիացրւի շուրջանակի մի պարիսպով և թէ սահմանակից թաղերը պիտի աւերւին։

—

Կ. Պոլիս, 20 օգոստոսի

Հայկական դաւադրութեան բացումը Զմիւռնիայում մեծ սարսափ է տարածել ամբողջ օսմանեան կայսրութեան վրայ։ Դաւադրութեան հետքը գտել է մի յոյն վաճառական, Ագրէ Պրոտօպապա անունով։

Daily Mail

—

«*Temps*»-ին հեռագրում են.

Ոստիկանութիւնը, խուզարկելով, գտաւ Զմիւռնիայում 115 ռումբ, 3 դժոխային մեքենայ, ուժանակի մեծ քանակութիւն և ուրիշ պայթուցիկ նիւթեր։ Կարծում են, որ բաց են արել ընդարձակ մի դաւադրութիւն։ Բռնւած նամակներից երեւում է, որ օգոստոսի 31-ին, սուլթանի գահակալութեան տարեդարձին՝ կառավարական պալատը, հիւպատոսարանները և բանկերը օդը պիտի ցնդէին։ Իմացել են, որ հայկական կոմիտէն վարձել է մի փոքրիկ խանութ, որտեղից ական կարող էր տարւել դէպի բանկը, ինչպէս որ մակեդոնացիք արել էին Սալոնիկում։ Քննութիւնը դեռ շարունակւում է. 40 հոգի ձերբակալւած են։ Անցագիրների բիւրօն և կայարանները ենթարկւած են խիստ հսկողութեան։ Հայկական թաղը գրաւած է զօրքերով։ Մեծ յուզմունք է տիրում քաղաքի մէջ։ Երկիւղ են կրում կոտորածներից։

—

«*Die Zeit*»-ին հեռագրում են.

Որովհետև Ժօրիսը չէր ուզում ոչ մի ցուցմունք տալ բելգիական դեսպանին — չը նայած որ նրան խոստանում էին բոլորովին անպատիժ ու ազատ թողնել,—նրա այժմեան խոստովանութիւնը հետեւանք է երեւում տանջական ազդեցութիւնների։

—

Շվէյցարական թերթերը հաղորդում են, որ Ժընէվի թիւրքական հիւպատոսը դիմում է արել ոստիկանութեան ու արդարադատութեան մինիստր Օդիէին և մատնացոյց լինելով Ժընէվում ապրող մի կասկածելի անձնաւորութեան վրայ, խնդրել է ձեռնարկել անմիջական քննութեան։ Օդիէն պատասխանել է, որ առանց Բեռնի դաշնակցական կառավարութեան հրահանգների նա ոչինչ չէ կարող անել։ Նոյն թերթերը հաղորդում են այժմ, որ Միւնիր բէյ, Պարիզի տաճկական դեսպանը, մօտ օրերս պէտք գայ Շվէյցարիա, անշուշտ փորձելու

ճնշում գործ դնելու դաշնակցական կառավարութեան վրայ։ Սակայն հասարակական կարծիքը Շվէյցարիայում արդէն որոշ կերպով հասկացնում է սուլթանի կառավարութեան, որ Շվէյցարիան չէ կարող մատնել քաղաքական „յանցաւորներին։“ Ուշադրութեան արժանի է մի քանի թերթերի առանձնապէս կծու լեզուն թիւրքական պաշտօնեաների դիմումների առթիւ։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Կովկասից վերջին պահուն ստացուած նամակները նկարագրում են ժողովրդական բուռն ուրախութեան ցոյցերը՝ դպրոցների վերաբացման և եկեղեցական գոյքերի վերադարձի առթիւ։ Հայ ժողովուրդը ամենուրեք խորապէս գիտակցում է, որ բռնապետութեան այդ զիջումը հետեւանք է իր ըմբոստութեան, իր ծնած ու սնած յեղափոխական կազմակերպութեան յանդուգն ընթացքի,— և հանդիսաւոր թափօրներով՝ նա այսօր տօնում է հայկական շարժման յաղթանակը։

ՏԵՐՐՈՐ

Սալնաձորում (Տաճկահայաստան), Հ. Յ. Դաշնակցութեան տեղական Կ. Կոմիտէի որոշմամբ՝ տէրրորի են ենթարկուած կախաղանի միջոցով երկու լրտես-մատնիչներ՝ Թաթվանցի Բզգօ և Ջրհօրցի Գրիգոր։ Սերոբի օրերից ի վեր այդ երկու վատերը, ձեռք ձեռքի տուած, Ալիբէկի վայրագութիւններին էին մատնում հայ երիտասարդներին և հարիւրաւոր գերդաստաններ էին դժբախտացնում։ Նրանք մեղսակից եղած են Ցակոբ-Ճարտարի սպանման և ընկ. Սօղօյի ու Համբարձումի բանտարկութեան։

„ԴՐՕՇԱԿ“Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ստացանք վերջին պահուն հետեւեալ հեռագիրները։

ՇՈՒՇԻ, 29 յուլիսի.

Զինուած խաղաղասիրական յանձնաժողովի ջանքերին, թիւրք համիտակամականներն աշխատեցին գրգռել ազգամիջութիւնը. այսօր (օգ. 29, նոր տոմ.) թիւրքերը սպանեցին մէկ հայի, վիրաւորեցին երկուսին և խլեցին զէնքերը։ Հայերը փորձեցին յետ առնել զէնքերը և դրա վրայ սկսեց ընդհարում ու փոխադարձ հրացանաձգութիւն։ Առ այժմ սպանուած են 9 հայ և 30-ից աւելի թիւրք։

ՇՈՒՇԻ, 30 յուլիսի.

Հրացանաձգութիւնը շարունակւում է։ Թիւրքերի կորուստը մեծ է։ Հայերը գերի են վերցրել 100-ից աւելի թիւրք, զինաթափ անելով նրանց։ Գերիների հետ վարւում են շատ լաւ։ Բազմաթիւ թիւրքական տներ այրւում են։ Թիւրքերը, հացը ընկած, հաշտութիւն են խնդրում։ Քաղաքը մերոնց պաշտպանութեան տակ է։

ԹԻՖԼԻՍ, 31 օգ.

Շուշում թիւրքերը յարձակւելով հայերի վրայ, սպանեցին 3 հոգի։ Հայերը անմիջապէս պատասխանեցին, և կռիւը ընդհանրացաւ։ Առաջին օրը սպանուած են 10 հայ և 34 թուրք։ Կռիւը սաստկացաւ յաջորդ օրը։ Հայերը շրջապատեցին և գերի վերցրին յայտնի Հիւսէյին բէկ Ջիւանշիրեանին իր հետեւորդներով և հարիւրի չափ այլ թիւրք կռւողներ։ Գերիների հետ շատ լաւ են վարւում։ Հայերը հաւաքում են վիրաւոր թիւրքերին և նրանց հիւանդանոց տանում։ Զօրանոցներում ապաստանել են բազմաթիւ թիւրքեր։ Թիւրք երեւելիները տրամադրուած են խաղաղութիւն խնդրելու, բայց աւազակ պարագլուխները մահուան սպառնալիքի տակ չեն թողնում։ Հայերից ընդամենը սպանուած են 10 և վիրաւորուած 20 հոգի։ Մինչև այժմ թիւրք սպանուածների թիւը 85 է, վիրաւորները բազմաթիւ են։ Գանձակի նահանգապետը աշխատեց կազակների հետ ուժով մտնել քաղաքը։ Նա օգնական զօրք և թնդանօթ է պահանջում։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

Նկատելով, որ Պոլսեցեան Կ. Կ. Կոմիտէի նախկին անդամ Վարդօ (Արփաի-խոռք) Պոլսեցեան շրջանի հասոյթներէն իւրացուցած 4673 արծաթ և 1339 ոսկի լէվ և կազմակերպական որոշ յանձնարարութեան համար Արեւելեան Բիւրօյի կողմէն իրեն ուղարկուած 2000 ռուբլի գումարները մինչև հիմա չէ յանձնած Դաշնակցական պատկանեալ մարմիններուն.

Նկատելով, որ վերոյիշեալ գումարները չը յանձնելու առթիւ Վարդօյի կողմէն Արեւմտեան Բիւրօյի ուղարկած գրաւոր բացատրութիւնները միանգամայն բանսարկուկ են.

Եւ հիմնուելով Պոլսեցեան վերջին շրջանական ժողովի արձանագրութեան, Կ. Կոմիտէի տեղեկագրի և պաշտօնական զեկուցման, ինչպէս նաև Արեւելեան բիւրօյի տուած վերջին լրացուցիչ տեղեկութեան վրայ,

Ներկայիս հրապարակով կը հրաւիրենք պ. Վարդօն, որ 15 օրուան միջոցին տայ գրական պատասխանատւութիւն՝ ամբողջովին վերադարձնելու համար վերոյիշեալ գումարները մինչև $^{1}/_{13}$ հոկտ. 1905 թ.։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ալան-Կարօէն ֆր. 10, Յ-ից 1, 20

Ռուսաստան. — ԴՐԱՄ կոմիտէէն՝ 35,000 ֆրանք։

Այգեստանցի Ա. Ա.-ից (50 ռուբլի) 132, 50

Գերմանիա. — յօգուտ Հայ Ուսանողական Ռազմական ռազմական Փոնտի Կովկասում՝

Բերլինի ուսանողներից		*171 մարկ*	*30 ֆ.*
Միւնխէնի	„	*38*	„
Տարմշտադի	„	*34*	„
Շղրասբուրգի	„	*10*	„
Գէօթէնի	„	*10*	„
Նէյնշտէթից	„	*2*	„
Գումար		*265* „	*30 ֆ. ֆր. 323, 86*

Ընդհ. գումար 35467 ֆր. 58 սանդ.

Դ-րորդ **ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ**

ԱՆԴՐԱՊԱՏ կոմիտէի ստ. 1-յունիսի 1905 թ.—

Հետեւեալ խմբերից՝ Պետօ 12. 30, Առու-Թափու 20, Պետօ 13. 50, Պետօ (Աւետիս) 96. 30, Սարվազների 6. 55, Կարօ 4. 50, Սերոբ-փաշա (Աւետիս) 60, Անդրանիկ (նեւ. ֆդ.) 7. 50, Պետօ 25, Անդրանիկ (նեւ. ֆդ.) 13. 50, Սերոբ-փաշա երեկոյթից 55, Սերոբ-փաշա երեկոյթ 5, Սարվազների 7. 20, Դիմանի (բախտա-բզր.) 30, Կարօ 5, Եւս 5, Արհեստաւորաց 34, Պետօ 35, Եւս 20, Հրայր (ֆանդ. ֆդ.) 17. 70, Արհեստաւորաց 30, Սերոբ-փաշա 7. 50, Եւս 15. 53, Բանդուած ֆդ. Հրայր 20, Կայծակ 5. 20, Եղանդ 3. 50, Կարօ 6. 40, Խենթ 8, Արհեստաւորաց 81, Սերոբ-փաշա (Ներկայց) 74, Բոլկէն-Սիւնի 3. 90, Պետօ 38. 35, Եւս 8. 10, Կարօ 6, Եղանդ 7, Կայծակ 4. 45, Դրօշակիէ 5. 30, Շամիրամ 13. 20, Թումանի 6, Կախկայ 20, Արհեստաւորաց 34. 10, Դժոխք 4. 50, Ջարդի Բ. 7, Վառվառէ 11. 50, Յամիկ 4, Ջաւօ 5. 15, Կարօ 6. 20, Կայծակ 3. 50, Պետօ 9. 50, Վազգէն 8, Դոնարիէլ 6. 25, Խենթ 6, Շամիրամ 10. 5, Ջաւօ 5. 15, Եւս 5. 65,

Բաբկին Սիւնի 6, Թումանե 6, Դրօշակ 20. 25, Ցասմիկ 10. 30, Գեսօ 9. 50, Դժոխք 6, Եռանց 3. 40, Կարօ 5. 95, Վազգէն 9. 50, Պ.ետ 9. 50, Տպլուրիկ 10, Ջալալոնց 34, եւս 52, Արսու 15. 50. եւս 25, Դոնարինէ 12, Կայ՝ակ 3, Թուման 8, Դժոխք 5, Փարոս 105, Արեւ.ստ. 9, Ցասմիկ 10, Ջաւս 25, ԵՒԷՐՆԵՐ Բանդեան ընդ. փասիուրս 2250 ճ. Ղափանից 5, Կանանց նանգ. 142, Խաւարից դէպի լոյս (ներ. ֆ) 40 Սարո-ի միջ նանգ. 45, Ցակօ-ի նանգ. 125, Բ-ի, Թ-ի, Դ-ի միջոց, տաես. 40, Թումանե եւ Դժոխք վիճ. անդվն. 30, Կանանց (ներկայացումից) 67. 15, Թումանե եւ Դժոխք 7, Բաբկէն Սիւնի 4. 35, եւս 6. 50, Ջարունի Ա. 9, եւս 9, Խրախոյս 18, Սահմանաբերդ վանաս. 60, Լուսամոմից (ջրեոր.) 71. 15, Սիրոդենի ներկ. 67. 35. Շամիրամ 21. 50, Սարվազներ կր. 20 ճ., Հանգանակ Մոսի միջոց 610:

Գումար 2740 ռուբլի 93 կոպէկ:

ԵՐԿՊՈՐԻ կոմիտէ անդամավճար Մկ. նոկս. նոյեմ. 5, Պ.ս. 10, Գեղ. 4, Հ, 20, Գվ. Ա. 8, Մ. Տ. Մ. 4. 50, Ն. 5, Վ.բ. 4, Բոր. 5. 50, Ա. Ս. 10, Մ. 7, Պ. 4, Մ. Ն. 10, Մր. 10, Բ. Ս. 8, Ջայրմայր խմբից 8. 30, Խ. Մ. 14, Ա. Վ. 5, Կոկոն խ. 6, Սէր խ. 10. 60, Վրէժխնդիր խ. 34. 60, Ծերուկ խ. 22 70, Ալազգեազ բ. 2, Կայծեր յուսոյ խ. 8. 13. Ալիշան խ. 56. 80, Աղբիւր խ. 11. 70, Անդրանիկ ֆ. 19. 10. Ն. Մ. 6, Նոմրաց խ. 12, Կայծակ—Վաղարշակ խ. 5. 40, Դողքան խ. 22. 35, Բախտ խ. 11. 50, Կոմիտաս խ. ֆ, Գ. Աղ. 2. 50, Անի խ. 7. 30, Սարդար խ. 7. 39, Վազգէն խ. 26. 05, Սրինգ խ. 25, Եղից խ. 6, Մ. Ս. 6, Մկ. 10, . Ս. 7, Կ. Մն. խ. 3, Որսորդ Դէլորզ խ. 4. 20, Որոնց 20. 30, Մուրազ ա. խմբ. 10. 60, Արձագանգ 18. 30, Մասիս խ. 44. 38, Դէնի խ. 24, Հրաբուղխ 33. 91, Ա. Տր. 10, եւս 20, Աբ. 16, Լ.ս. 18, Գ. Տ. Գ. 5, Մով. 15, Ա. Գ. 6, Ն. Ն. 5, Բաբ. 5, Հ. Աղ. 15, Հ. Ի. 10, Մ. Բ. 3. 50, Մկ. 2. 50, Գեղ. 2, Պ. 5, Ա. Ն. 10, Աբովեան խ. 34, Ռումբ խ. 7. 50, Ալազանի Ենթակոմիտէի Որոս խ. 15. 40, Ալազանի Ենթակոմ. Հաւազաս խ. 15, Ալազանի Ենթակոմ. Փոքորիկ խ. 10, Ալազանի Ենթակոմ. Որոտի խոնարհ մեծից 12. 60, Ապատիկ Սկ. ի ճաշիւ թերթ նամար 57 25, Նոր լոյս խ. 9, 80 Շերօ—Զարօ 27. 17, Զէյթուն բ. 5. 12, Նոր Սերունդ խ. 12. 80, Թումանե խ. 6, Սնոտ խ. 9. 80, Թաթուլ 14. 62. Բաջբերունի 3. 40, Մարտին խ. 13. 70, Ալազազ խ. 7. 58, Արամ խ. 10. 95, Տաբլ խ. 6. 88, Դրպիկ խ. 30, Զինուորներից յետ սացած անցագրերի նամար 16 Գումար 1073 ռուբլի 40 կոպէկ:

ԴԱՂԿԱԶՈՒՐ Ենթակոմիտէի 1904 թ. օգոստոսի 1-ից մինչեւ դեկ. 31. Հեռեւեալ խմբերից Արշաւանք 15, Եռանց 3. 59, Ս. Խաչ 8. 30, Արձագանք 29, Մանկամ Ազատութիւն 3. 50, Շտուրմ 6, Խանասոր 4. 60, Սերոբ փաշա 1. 90, Թերոսնց գ. կերիչ 6. 60, Ոսկէձոր գ. Երկաթ 1. 40, Բեռոն գ. Ազագիլ 20, Լիռ գ. Բաղցր 3. 20, Թենգանոր 8. 50, Արշալոյս 15, Սաթ. գիւղ. 2, Վրամաբաղուն գ. 4, ԵՒԷՐՆԵՐ Նաւասարդից 10, Հրաբուղխից 20, Ա. Ց-ից 3, Հ. Տէր-Պ-ից 2, Աբր. Բ-ից 100, Մ. Ս-ից 50, Գեր. Գ-ից 75, Աւ. Ս-ից 90, Բէկ. Ա-ից 25, Տէր Գ-ից 90, Կ. Ղ-ից 25, Յ. Բ-ից 100, Իվ. Մ-ից 40, Ջաւ. Ա-ի խ. 40, Որ. խ. 63, Եագ. Ս-ից 48. 5, Գ. Ց-ից 20, Գրքերից բաց նամ. վիճակ. 7. 13:

Գումար 940 ռուբլի 77 կոպ.

ՈՍԿԷ—ՄԱՅՐ Ենթակոմիտէ 1905 փետր.—մայիս նեռեւեալ խմբեր. Բամբի 32, Զէյթուն 69, Կապ. Բեղ 64, Սարսափ 22. 50, Հրաբուղխ 18. 60, Անդրանիկ 47. 35, Ջրադաց 16, Կայծակ 5. 70, Տուգանքներից 12. 50:

Գումար 287 ռուբլի 65 կոպ.

ԹԱՌԱՍՏԱՆԻ ենթակոմիտէն 1905 թ. յունուար, փետրուար եւ մարտ ամիսներին. —

Թառաստանի մէջ եղած վիճակախաղից 66 ռուբլի, Փունջից 6. 76, Թառաստանից 5. 5, Լանմաղի Խորհուրդ մեծից 66, Պաշարեալ քաղաք Փիրուզայից 1, Քանդուած քաղ. (Աղբիւր) Աշոտ-Երկաթ 63. 85 ռ., խմբերից՝ Փունջ 49. 10 ռ., Արմատ 13. 50, Նետաձիգ 6. 15, Արեւալոյս 6. 65, Ջալլադի 5. 25, Բամբակի Սերոբ-աղբիւր 48, Լանմաղի Ծիծեռնակ 22, Քանդուած քաղ. Հերոս 40 ռ.: Հեթումեան շրջանից՝ Կայծակ եւ Լուսաւորիչ 3. 5 ռուբլի, Խորհուրդ մեծից 55. 50, երեկոյթից ապարիկ 8. 56, Թառաստանի սեպտ. 8-ի ներկայաց. 90. 76, Նոյն տեղի Խորհուրդ մեծից 106. 75, Նոյն տեղի Վարդան Մամիկոնեան տօնի երեկոյթ. 238. 10, Մեծ Օքա քաղ. զինուորներից 14. 1, Պաշարեալ քաղ. Խորհուրդ մեծից Հրայր եւ Անդրանիկ խմբ. 207. 10, Պաշարեալ քաղ. ազգասէր գիւղարն 9. 60, Բամբակ քաղ. Մասիս 12. 50, Քանդուած քաղ. Հերոս 67, Նոյն տեղի Աշոտ-Երկաթ 44. 50, Մամիկոնեան 33, Բուն-բամբակ 58, Վիշապից եւ Կէտաղարծից 10, Բուլնագուլ 10. 77, Իշխան 12, Առաքելից (6 հոգի) 9, Առաքելից (4 հոգի) 4, Բ-յան 10, Վար-եան 10, Կենտրոն 75, Ռուս-մով 5, Լ.-Ս-եան 5, Ա.-Ց-եան 3, Պառաւ 1. 70, Ա.-Սաֆ-եան 29. 43, Նիշիլ 25. 50, Բազուկ 18, Այծեամ (Իվան, Աղաջան, Սիմոն) 45, Աբքայ 27, Քար-աղբիւր 16. 80, Դեզակ 18, Բաղիլ 10, Պետրոս 3. 10, Եղեգնում Աթարից 10, Թումանից 5. 80, Փունջ 23. 30, եւս 13, Նետաձիգ 15, ապրիլի 19-ի խնջոյքից 115, Նոյեմիսից 25 ռ., խմբերից՝ Մշակ 69 ռ., Զինուորաց 3. 60, Խենթ 56. 6, Լուսաւորիչ Կէտ 5. 10, Հայկազուն 6, Ջալլադի 7. 70, Բամբակ քաղաք. Մասիս 19. 35, Լան-Մաղ քաղ. Ծիծեռնակ 35. 15, Պաշարեալ քաղ. Հրայր 20. 10, Քանդուած քաղ. Աշոտ Թաթուլ 31, Վրէժ 11. 30, Լուսաւորիչ 12. 50, Լան-Մալ Ծիծեռնակ 12. 85, Լան-Մազ քաղ. Թումանն 38, Արշալոյս 16. 70, Ազնուական 13. 50, Վասպուրական 19. 25, Մնի 6. 60, Անանուն 2. 15, Հեթումեան շրջանի Մշակ 55, Կայծեր 5. 50, Վազգէն եւ Արարատ 6. 55, Բողոք եւ Զինուորապետի 4. 85, Բողոք 4. 55, Ոսկանապատ 7. 60, Ծառաստանի Ջալլադի 14. 35, Արեւալոյս 5. 75, Երկաթ 4. 90, Վարդ 10. 90, Արմատ 19. 25, Արտաւազդ 4. 5 ռուբլի: Գումար 2442 ռուբլի 55 կոպէկ:

Ընդհ. գումար 7485 ռուբլի 33 կոպ.:

ՆՈՐ կոմիտէն՝

1904 թ. երկրորդ կիսամակին. —

Հետեւեալ խմբերից՝ Կայծ 167 ռուբլի, Քայլ 41. 96, Դիսակ 70. 50, Նոր 65. 50, Նէմրութ 99. 50, Մօտկան 91, Խնդրակատար 316. 50, Տուժիկ 60, Առիւծ 56, Գնտափ 24, Զէյթուն 88. 50, Ցոյս 16 75, Գրիգոր աղայից 100: Գումար 1196 ռուբլի 21 կոպէկ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ կոմիտէն՝

1905 թ. յունուարից մայիս. —

Նամէր 57 անդորրագրով Պ. Գ. 15 ռուբլի, Ն. 58 անդորր. Պ. Ք. 600, Ն. 59 անդորր. Տ. Ջ. 1500, Ն. 60 անդորր. Վ. Գ. 6, Ն. 61 անդորր. Ուսանողութիւնից 300, աւելորդ մնացուց 231. 95, Ոմն 15. 35, Կարմիր խաչի երեկոյթից 113. 12 ռուբլի: Գումար 2481 ռուբլի 42 կոպէկ:

Ե-ԲԴ Կ. ԿՕՄԻՏԷ.

ԿԱՐՄԻՐ ԲԱՂԱՌԻ „Ծիլ“ կոմիտէ 1905 թ. 22 մարտ.—4 լուլիս.

Կար-Յով. 100, Աւ. Սեթի. 100, Ղազ. Յար. 100, Մի քանի նամակրողներից 13 ճ. կարճ նրացաններ, Պ. Պ. 200, Ս. Խ. 100, „Սօսի“ խ. 7. 50, Թ. Եար. 200, Յակոբ տուգանք 10, Կ. Զ. 50, Մ. Ղար. 200, „Խաչտվայր“ խ. անդամվճ. 9. 50 Մ. Շ. 50 „Բլպիտեր“ խ. անդ. 6, „Բլպիտեր“ խ. Երկաթ, Արնի, Կարին-Սիմոնց անդ. ԵՒԷՐ 2. 50, „Սօսի“ խ. 7, Խաւնարաղամ Դերբերից 100, „Հրայր“ խ. 34, „Սօսի“ խ. վիճակախաղ 50, Մ. Շ. 50, Տ. Գ. Ն. 200 „Խաչտվայր“ խ. 9, Հաշիներ եւ ապր. անդամ. 33, „Սասանի-ապտակ խ. 5. 30, „Հրայր խ. 17, Պ. Պ. 200 Ս. Հեղեանց 5. „Արշալոյս“ խ. 6. 80, Սօսի խ. 11 „Ախոյեան“ խ. 6. 50, Ձեր-Խապ 300, Ա. Սմիր 100, Գ. Տ. 100, Կ. Խապ 50, Տ. Եղ. Արբ. 50, Պ. Երից. 25, Լ. Տիմ. 25, Ս. Թ. 25, Գ. Թազ. 12. 50, Յ. Գր, 12. 50, Մ. Բ. եւ որդ. 1000, Մ. Բ. եւ որդ. 150, Գ. Ղար 50, Գ. Շուխ 15, Գ. Կափ. 10, Յ. Կրաս. 10, Ա. Զոր. 10, Միլոնց սպոյ 100, եւս 50, Դաւի Շար 10, „Նորաբոյս“ խ. 8. 60, Լ. Շաբ. 50, Յ. Կապ. 10, Լ. Խոճ 10, Ց. Բայրամ 10:

Գումար՝ 4063 ռուբլի 70 կոպէկ:

ՊԱԼԿԱՆԵԱՆ կեդր. կոմիտէն՝

ՌՈՒՍԱՍԻՆԻ կոմիտէն.—Շիրազի „Կայծակ“ խ. 53 լ. 50 ռ., „Շամլ.“ խմբից 24. 50, „Թաթուլ“ խ. 16. 50, Տիկնանց Սօսի խ. 23 լ. „Խանասար“ խ, 16. 50, „Տէռօռ 149, Կ. Փափազեանէ 100. Սամովիսկից Խորհ. Պետրոսեանէ 20, Ռուսչուքի ընկերներու խնջոյքից 116 լ. Սամովիսի „Արկած“ խ. 185 լ. Գումար 704 լ.: ԵԱՄՊՈԼ նորակազմ խումբից 100 ֆր. եւ 31 լէվ. համազումար 735 լէվ եւ 100 ֆր.

Խմբագրութեանս մօտ ստացած են Դաւանգիստի շրջանի մինչեւ 1 յուլ. 1905 հաշիւը և Կ. Կոմիտէի հանգանակութեան ցանկը, Այգեստանի Կոմիտէի յունվ. փետր. մարտ 1905-ի ցանկը և Նոյն Կոմիտէի Զինաբաշխ Ցանձնախմբի հաշիւները, Մ. Ք.-ի Նոյեմբ.—դեկտ. 904-ի և յունվ. 905-ի նվիրատուութեան ցանկը, Նալբանդ Կոմ.-ի առ 20 ապրիլ 1905-ի, Մրգաստանի 1905 յունվ. 1—21 Մարտի և Ջրաբերդի 1905 յունվ. մարտի հաշիւները:

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rèdaction du „DROSCHAK“. Genève (Suisse)